

ՏՈՔԹ. ԵՔ ԳԵՈՐԳԵԱՆ ՄԱՐԱՅԱՒ՝ 83 ՏԱՐԵԿԱՆԻՆ



ՃԷԲ ԳԵՈՐԳԵԱՆ ԻՐ ԽՆԱՐԱԾ ԻՆՖՐԱՍԱՍՅԱՆՈՒՅԵԱՆ ԳՐԹԻՖԻՆ ԻՆՏ

Յունիս 3-ին, Տիթրոյթի հիւանդանոցներէն մէկուն մէջ 83 տարեկանին մահացաւ Տոքթ. Ջէք Գեորգեան, որ շատ յաճախ կը կոչուէր նաև «Տոքթ. Մահ»: Որպէս գլխավոր թեմայի հաւատարմութեան հաւատարմութեան հաւատարմութեան համար Գեորգեան 1950-ական թուականներէն սկսեալ կը պաշտպանէր անդամներէն հիւանդներու կողմէ իրենց մահուան պահը որոշելու իրաւունքը:

Տոքթ. Գեորգեան իր հնարած գործիքի միջոցաւ օգնած է շուրջ 130 հիւանդներու՝ վերջ դնելու իրենց տառապանքներուն: Իր այս գործունէութեան համար Գեորգեան դատուած էր հինգ անգամ, միշտ ալ անմեղ դուրս գալով:

Մակայն, 1999-ին Գեորգեանի դէմ ներկայացուցաւ սպանութեան մեղադրանք: Դատարանի կողմէ յանցաւոր նկատուելով, դատապարտուեցաւ 10-25 տարուայ բանտարկութեան: 8 տարի բանտ մնալէ ետք, ան 2007-ին ազատ արձակուե-

ցաւ անողջական պատճառներով: 2010 թուականին HBO հեռատեսիլի ընկերութեան կողմէ Գեորգեանի մասին պատրաստուած ֆիլմը արժանացաւ բազմաթիւ մրցանակներու:

Բժիշկներու համաձայն, Գեորգեանի մահուան պատճառը եղած է թոքային հիւանդութիւնը եւ երիկամներու բորբոքումը:

Ճէք Գեորգեանի մահը լայն արձագանքի արժանացաւ ամերիկեան մամուլի էջերուն վրայ, ինչպէս նաև հեռատեսիլի ու ձայնասփռուի հաղորդումներու ընդմէջէն:

Ճէք Գեորգեան հրապարակային իր վերջին ելոյթներէն մին ունեցաւ Լոս Անձելըսի Գալիֆորնիոյ Համալսարանէն ներս: Աւելի քան 1500 հոգիներու ներկայութեան տեղի ունեցած միջոցառումը կազմակերպած էին Համալսարանի Հայ Ուսանողներու Միութիւնը եւ Քալիֆորնիոյ Հայ Բժիշկներու միութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԸ ՆԿԱՏԵՆ ՀԱԿ-Ի ԱՌԱՋԱՐԿԸ

Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Կարէն Կարապետեան անընդունելի որակեց երկխօսութեան համար պատուիրակութիւն կազմելու եւ արտահերթ ընտրութիւններու շուրջ բանակցելու՝ Հայ Ազգային Գոնկրէսի (ՀԱԿ) առաջարկը:

Պատասխանելով «Նովոստի-Արմենիա» գործակալութեան հարցին՝ Կարապետեան ըսած է, «Դժուար չէ նկատել, որ այդ երկխօսութիւնը վաղուց է սկսուել, բաւականին արդիւնաւէտ ընթացում է եւ մի շարք դրական փոփոխութիւնների արդէն իսկ հանգեցրել է: Դա պարզապէս այնքան ակնյայտ է, որ երկխօսութիւն սկսելու մասին խօսելն առնուազն տարակուսելի է: Ինչ վերաբերում է պատուիրակութիւն ձեւաւորելու եւ արտահերթ ընտրութիւնների շուրջ բանակցելու առաջարկին, ապա այստեղ թէ՛ առաջարկուող ձեւաչափը, թէ՛ դրուող հարցը, մեծ հաշուով, ուղղակի ինքնանպատակ են եւ, ինչպէս դժուար չէր կռահել, անընդունելի»:

Շարունակելով, նախագահի ներկայացուցիչը ըսած է, «Իսկ «պատուիրակութիւնների բանակցութիւններ» արտայայտութիւնն այնպէս ուռնացուած ու գունազարդուած է ներկայացում, կարծես խօսքը վերաբերում է միջպետական բանակցութիւններին եւ ոչ թէ իշխանութիւն - ընդդիմութիւն գործակցութեանը, որի իրականացման՝ աշխարհում տարածուած մեխանիզմները մեր երկրում կան, եւ որոնց վերջին տարիների ընթացքում աւելացել են նաև Հայաստանի Հանրապետութեան նախագահի կողմից առաջ քաշուած նոր ձեւաչափերը»:

«Մենք շարունակում ենք յանուն Հայաստանի առաջընթաց զարգացման՝ բոլոր քաղաքական

ուժերի հետ համագործակցելու մեր ջանքերը՝ կարեւորելով հնարաւոր արտաքին սպառնալիքներին համախմբուած դիմակայելու անհրաժեշտութիւնը, երկրում համակարգային փոփոխութիւնների շարունակականութիւնը, դրանց նոր ազդակ հաղորդելն ու շօշափելի արդիւնքներ երաշխաւորելը: Այս տեսանկիւնից կոալիցիոն կուսակցութիւնները պատրաստակամ են արդիւնաւէտ աշխատել բոլոր քաղաքական ուժերի, այդ թւում եւ ՀԱԿ-ի հետ՝ գործադիր իշխանութեան կառուցներում եւ Ազգային ժողովում հանդէս գալով ՀԱԿ-ի բոլոր իրականանալի եւ «յանուն» առաջարկներն առաջ տանողի դերում», - եզրակացուցած է նախագահի աշխատակազմի ղեկավարը:

Պատասխանելով Կարէն Կարապետեանի այս յայտարարութիւններուն, ՀԱԿ-ի ներկայացուցիչ, նախկին քաղաքական բանտարկեալ Նիկոլ Փաշինեան «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է, «Եթէ իշխանութիւնը հրաժարուած է երկխօսութիւնից, ուրեմն Սերժ Սարգսեանը պէտք է ցուցաբերի բաւարար կամք, համարձակութիւն եւ ինքը յայտարարի, որ մենք հրաժարուած ենք երկխօսութիւնից եւ իր վրայ վերցնի դրա բոլոր հնարաւոր քաղաքական հետեւանքները: Կարեւոր է, որ Սերժ Սարգսեանի ինքը հաստատի, որ կրում է այդ պրոցէսի ճախողման պատասխանատուութիւնը: Հետագայ զարգացումների համար, նաև պատմական առումով շատ կարեւոր է, որ ՀԱԿ չստակեցնենք պատասխանատուին»:

Փաշինեան շեշտած է որ, ՀԱԿ-ը երկխօսութեամբ թէ՛ առանց երկխօսութեան իր գործը պիտի շարունակէ եւ փակուղի մտնելու առջեւ չէ կանգնած:

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԵՑ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՆ

Թրքական դատարանը բանտարկութեան դատապարտած է Իսթանպուլի «Ակոս» թերթի խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան գործով 6 զինուորական պաշտօնեաներ:

Տրապիզոնի ոստիկաններու հրամանատար Ալի Օզ եւ հետախուզական վարչութեան պետ Մէթին Երլտըզ դատապարտուած են 6 ամսուայ, իսկ 4 այլ զինուորականներ՝ 4 ամսուայ բանտարկութեան: Անոնք կը մեղադրուին իրենց պարտականութիւններուն մէջ թերանալու եւ Տինքի սպանութիւնը չկանխելու մէջ:

Բանտարկութեան դատապարտուած զինուորականներէն երկուքը՝ Օքան Շիմշէք եւ Վայսէլ Շահին իրենց սուած վկայութիւններու ընթացքին ըսած են, որ «Ակոս» թերթի խմբագրապետի սպանութիւնէն 6 ամիս առաջ իմա-

ցած են ծրագրուող սպանութեան մասին, տեղեակ պահած են հետախուզական վարչութեան պետ՝ Երլտըզ, ան ալ, իր հերթին, տեղեակ պահած է ոստիկաններու հրամանատար Ալի Օզը, սակայն Օզ այս տեղեկութիւնը ստանալէ չետոյ միջոցներ չէ ձեռնարկած՝ սպանութիւնը կանխելու ուղղութեամբ:

«Ակոս» թերթի խմբագրապետ Հրանդ Տինքը սպանուած էր 2007-ի Յունուար 19-ին՝ թերթի խմբագրատան առջեւ, 17-ամեայ Օզին Սամասթի արձակած կրակոցներէն: Տինքի հարազատները, ընկերները, ընտանիքի փաստաբանը մնացուն կերպով կը պնդեն, որ յանցագործութեան ետեւը կանգնած են այլ անձինք, որոնք Տինքի սպանութեան իսկական մեղաւորներն են, սակայն չեն բացայայտուիր ու կը մնան անպատիժ:

ՏԵՐ ԱԲԷԼ ՔԱՅԱՆԱՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԱՊՕՐԵՆ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԻՐ ԴԵՍ ԱՌՆՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի օրօք կարգալոյժ եղած է 40 հոգեւորական: Վերջինը՝ Յունիս 1-ին կարգալոյժ հռչակուած է Ժընեւի Հայոց եկեղեցւոյ հովիւ Տ. Աբէլ քահանայ Մանուկեան:

Տէր Աբէլ Մանուկեան հանդէս եկաւ Գարեգին Բ-ին ուղղուած բաց նամակով, ապօրինի նկատելով վեհափառի այդ որոշումը:

«Ոչ ձեզմէ կարգ ստանալն է պատիւ, եւ ոչ ալ կարգալոյժ ըլլալը՝ անպատուութիւն: Դուք կը կարծէք, թէ կարգալոյժ ընելը Ձեր գորութիւնն է, մինչդեռ ան ձեր ամենամեծ տկարութիւնն է: Նկատի ունենալով, որ կարգալուծման սոյն տնօրինումը եկեղեցական, վարդապետական, ծիսական, կանոնական, կարգապահական ոչ մէկ հիմք ունի եւ ընդհակառակը, արդիւնք է ընդամենը կաթողիկոսի վստահուած իշխանութեան չարաշահումի, այս որոշումը կը յայտարարեմ անարդար, անընդունելի եւ ապօրինի», - ըսուած է Աբէլ քահանայի նամակին մէջ:

Այս դէպքերէն յետոյ, Հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսան հրապարակումներ այն մասին, որ Գարեգին Բ-ի օրօք կարգալոյժ հռչակուած են ամենաշատ թիւով հոգեւորականներ:

Նախ քան այս բաց նամակը, քահանան բացատրողական նամակ մը լղած է վեհափառին, որ կը հրատարակենք մեր ներքին էջերուն վրայ:

ՐԱՅԱՍԱՆ

ՆԱԽԿԻՆ ԶՅՇ-ԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ Է ՁԵՒԱԴՈՐՈՒԵԼ

ՀՀՇ նախկին փոխնախագահ Խաչատուր Քոբրեյլեանի կողմից նոր քաղաքական ուժի ձևավորումը փաստը մէկ տարի առաջ ՀՀՇ-ում տեղի ունեցած պրոցեսների արդիւնքն է: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց ՀՀՇ փոխնախագահ Սամուէլ Աբրահամեանը՝ անդրադառնալով «Ազատ դեմոկրատներ» անունով նոր քաղաքական ուժի ձևավորմանը: «Դա նոր պրոցես է, այլ մէկ տարի առաջ տեղի ունեցած զարգացումների արդիւնք, որն այժմ ֆորմալացուել է: Այդ նոր ուժին վերաբերում է նորմալ, ինչպէս կը վերաբերուէի ցանկացած այլ ուժի ձևավորման փաստին», - յայտարարեց Աբրահամեանը:

Հարցին, թէ ՀՀՇ-ում մտավախութիւն չունեն՞, որ «Ազատ դեմոկրատներ»-ը այլընտրանք կը դառնայ ՀՀՇ-ին եւ ՀԱԿ-ին, քանի որ այդ ուժին իր աջակցութիւնն է յայտնել ԱՄՆ դեսպան Մարի Եովանովիչը՝ Աբրահամեանը ծիծաղով արձագանգեց, թէ ցանկացած քաղաքական ուժի կարելի է գնահատական տալ՝ ելնելով դրա գործունէութիւնից: «Այդ նոյն տրամաբանութեամբ, կարելի է ենթադրել, որ ՀԱԿ-ին կարող են այլընտրանք դառնալ արդարադատութեան նախարարութիւնում

զրանցուած միւս բոլոր կուսակցութիւնները: Այլընտրանք դառնում են ոչ թէ սոսկ ստեղծուելով, ձևավորուելով, այլ՝ գործելով: Սպասենք գործողութիւնների զարգացմանը», - առաջարկեց ՀՀՇ փոխնախագահը:

Նշենք, որ Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Եովանովիչն Յունիսի 6-ին այցելել է «Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան գրասենեակ, որտեղ հանդիպել է կուսակցութեան ղեկավարութեան հետ: Հանդիպման ընթացքում քննարկուել են Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքական հիմնահարկերին, ժողովրդավարութեան եւ քաղաքացիական հասարակութեան զարգացմանը վերաբերող հարցեր: Երկուստեք կարեւորուել է Հայաստանում դեմոկրատական արժէքների զարգացման հեռանկարները, հասարակութեան մասնակցութեան դերը որոշումների կայացման գործընթացում: Նորայտ կուսակցութեան ղեկավար Խաչատուր Քոբրեյլեանին, ինչպէս յայտնի է, մօտ մէկ տարի առաջ մեծ աղմուկով հեռացրին Հայոց համագաղտի շարժում կուսակցութիւնից եւ Հայ ազգային կոնգրէսից: «Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան կորիզն էլ նրա հետ միասին հեռացուածներն են:

ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՐԵՐԻ ԶԱՐԱԶԱՏՆԵՐԸ ԻՎԱՍԹԱՓՈՒԱԾ ԵՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՑ



Մարտի 1-ի գոհերու հարազատները թերահաւատ են

Մարտի 1-ի գործի քննութեանը նոր թափ հաղորդելու մասին Սերժ Սարգսեանի ցուցումից մօտ 1.5 ամիս անց գոհուածների հարազատները հիասթափութիւն են յայտնում ընթացող զարգացումներից: 10 գոհերից Տիգրան Խաչատրեանի մայրը՝ Ալլա Յովհաննիսեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասում է, որ մեծ ակնկալիքներ ի սկզբանէ չունէր: «Բայց չէի էլ պատկերացնում, որ այսպիսի պատկեր կը լինի: Մտածում էի՝ երեւի թէ կրակողներին, ցածր ատենաներում կանգնած ոստիկաններին կը ձերբակալեն եւ մինչեւ վերեւ չեն գնա: Տեսնելով [Մարտի 1-ի գործով քննչական խմբի ղեկավար] Վահագն Յարութիւնեանի յայտարարութիւնները, [հասկանում ես, որ] ուղղակի ծաղրում են ծնողներին, կողմնակի ամէն ինչ անում են, որ իրական հարցից շեղուած լինեն եւ դա անում են ոչ թէ նրա համար, որ չեն կարողանում բացատրել, այլ միտումնաւոր», - ասում է Յովհաննիսեանը:

Մարտի 1-ի գործով քննչական խմբի ղեկավար Վահագն Յարութիւնեանը անցած շաբաթ յայտարարել էր, թէ հաստատուել է, որ ոստիկանութեան սպայ Համլէտ Թադեւոսեանը եւ ոստիկանութեան գործերի գինձառայող Տիգրան Աբգարեանը սպանուել են գանգուածային անկարգութիւնների մասնակիցների գործողութիւնների հետեւանքով:

Յատուկ միջոցների կիրառումից գոհուած Տիգրան Խաչատրեանի մայրը հարցնում է. - «Իսկ ինչո՞ւ, երբ յատուկ միջոցից գոհուել է իմ որդին՝ գլխի հետեւի վիրաւորումից, երբ ինքը ոչ մի կերպ չէր կարող վտանգ ներկայացնել ոստիկանի համար, ինչո՞ւ մինչեւ հիմա այս ոստիկանը չի կանչուել հարցաքննութեան: Կէս քայլ անգամ առաջընթաց չկայ», - ասում է Յովհաննիսեանը:

Մարտի 1-ի դէպքերի բացայայտման ցանկութիւն, գոհերի հարազատների համոզմամբ, իրականում չկայ, թէեւ նախաքննական մարմինը վստահեցնում է, որ ոստիկաններ էլ են հարցաքննուելու:

ՔՈՉԱՐԵԱՆՆԵՐԸ ՇԱՐՅԻՆ ԴԱՏԸ

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանը Յունիս 6-ին մասնակի բաւարարեց Բելլա եւ Սեդրակ Քոչարեանների հայցն ընդդէմ «Ժամանակ» օրաթերթի: Դատարանը թերթին պարտաւորեց հերքել «Հայաստանի երկրորդ նախագահի» ընտանիքի անդամների պատիւն ու արժանապատուութիւնը, բարի համբաւը արատաւորող տեղեկութիւնները, ինչպէս նաեւ զրպարտութեան եւ վիրաւորանքի համար փոխհատուցել 3 միլիոն դրամի չափով վնասը: Եւս 3 միլիոն Քոչարեանները պահանջում էին որպէս փաստաբանական ծառայութիւնների վճար, սակայն դատարանը այս մասով մերժեց հայցը: Թերթի փաստաբան Նիկոլայ Բաղդասարեանը վճռի հրապարակումից յետոյ յայտարարեց, թէ այն ամբողջութեամբ հակաօրինական է. - «Սա իրաւաբանութիւնից հեռու որոշում է, եթէ իրաւաբանական չէ, ուրեմն քաղաքական է», - ասաց փաստաբանը: «Ժամանակ»-ը անցած տարուայ իր երեք հրապարակումներում գրել էր, թէ Բելլա Քոչարեանը զբաղւում է ղեղադրածական բիզնեսով, իսկ որդին՝ Սեդրակ Քոչարեանը ոմն ձեռնարկատէրից խլել է առեւտրային կազմակերպութիւն: Հրապարակումներից մէկի համաձայն էլ՝ Սեդրակ Քոչարեանը աղամանդի հանքեր ունի Հնդկաստանում:

ՏԻԳՐԱՆ ՓՈՍԱՆՋԵԱՆԸ ԱԶԱՏ ԱՐՉԱԿՈՒԵՑ

Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանի եղբայրը՝ Տիգրան Փոստանջեանը Յունիսի 3-ին կայացած դատական նիստում ազատ արձակուեց դատարանի դահլիճից: Դատաւոր Արթուր Մկրտչեանը որոշեց Փոստանջեանի նկատմամբ յարուցուած քրէական գործի վարույթը կարճել, դադարեցնել քրէական հետապնդումը եւ նրա նկատմամբ կիրառել Հայաստանի անկախութեան 20-րդ տարեդարձի կապակցութեամբ յայտարարուած համաներումը: Պատգամաւորի եղբայրը մեղադրում էր սպօրինի վարձատրութիւն ստանալու մէջ: Զարուհի Փոստանջեանը եղբոր ձերբակալութիւնը կապում էր իր քաղաքական գործունէութեան հետ՝ պնդելով, որ այդ կերպ փորձում են ճնշում գործադրել իր եւ «Ժառանգութեան» միւս ընդդիմադիր պատգամաւորների վրայ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՈՂՋՈՒՆՈՒՄԷ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԶԱԿ-Ի ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Դաշնակցութիւնը չի խանդում իշխանութեան եւ ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրէսի երկխօսութեանը: Աւելին՝ ողջունում է նրանց քայլը: Խորհրդարանում հրաւիրած ասուլիսի ժամանակ այս մասին յայտարարեց Դաշնակցութիւն խմբակցութեան ղեկավար Վահան Յովհաննիսեանը: Այդ գործընթացի ամենադժուարակն արդիւնքը Յովհաննիսեանը համարում է այն, որ Հայաստանում վերջապէս գաղափարական պայքար կը ծաւալուի: «Ի՞նչ է ասում Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ Հայաստանը չի կարող դիմանալ, եւ կարող է լաւ ապրել մենակ ու մենակ Ղարաբաղը յանձնելու պարագայում: Միւս կողմից, Դաշնակցութիւնը ասում է՝ ոչ, կարելի է դիմանալ ու զարգանալ չզիջելով, որովհետեւ մենք այդ պոտենցիալը ունենք», - պարզաբանեց Դաշնակցութիւն խմբակցութեան ղեկավարը: Նոյն հարցի վերաբերեալ իշխանութեան դիրքորոշումը Վահան Յովհաննիսեանը գնահատեց «ուսիկալ» ու ընդգծեց. - «Հիմա տեսք, թէ ի՞նչ է ասում իշխանութիւնը՝ կարելի է դիմանալ, շատ ցանկալի է դիմանալ, բայց ես չեմ կարող»:

Հայ Ազգային Կոնգրէս եւ իշխանութիւն երկխօսութեան պտուղները արդէն երեւում են, կարծում է Յովհաննիսեանը: - «Ե՛ւ իշխանութեան, ե՛ւ ընդդիմադիր ՀԱԿ-ի կողմից կայ յարձակում ՀՅԳ-ի վրայ»:

ԱՏԵՓԱՆ ՍԱՖԱՐԵԱՆ.-

«ԶԻ ԲԱՑԱՌԻՈՒՄ, ՈՐ ԶԱԿ-Ն ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՈՎ ԱՍՆԱԿՑԵՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ»

Գործող իշխանութեան եւ Հայ Ազգային Կոնգրէսի միջեւ այսօր կան գաղափարական ընդհանրութիւններ: Յունիս 7-ին լրագրողների հետ հանդիպմանը նման տեսակէտ յայտնեց Աժ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը: «Միայն մէկ տարբերութիւն կայ. այդ ուժերից մէկը իշխանութեան դաշտում է, միւսը՝ ընդդիմութեան», - նշեց բանախօսը: Սաֆարեանի խօսքով՝ եթէ իշխանութեան բաժանման հարցում համաձայնութեան գան եւ յաղթահարեան այսօրուայ անվստահութեան միջոցները, ապա չի բացառուում, որ ՀԱԿ-ն ու իշխանութիւնը յաջորդ խորհրդարանական ընտրութիւններին մասնակցեն մէկ միասնական դաշինքով: «Եթէ այդքան ընդհանրութիւններ կան, ապա նոյն դաշինքի կամ նոյն իշխանութեան մէջ լինելը ինչո՞ւ պէտք է հակացուցուած լինի», - ասաց Սաֆարեանը: Նրա համոզմամբ՝ ՀԱԿ-ի պահանջների շրջանակը իշխանութեան հետ համաձայնեցուած էր: Երկրում քաղաքատարկեալների հարցը լուծուած չէ, քանի որ, ըստ Ստեփան Սաֆարեանի, քաղաքական դատավճիռ կայացրած դատաւորը չի պատժուել եւ քաղաքատարկեալ երեւոյթը երկրում արմատախիլ չի արուել:

Նա նշեց, որ «Ժառանգութեան» օրակարգում շարունակում է մնալ «արտակարգ արտահերթ լուծումը» եւ նոր իշխանութեան ձեւաւորումը:

ԼՈՒՐԵՐ

ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ ՅՈՅՍԵՐ ԵՆ ԿԱՊՈՒՄ ԿԱԶԱՆԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԵՏ

Նրանց խօսքով, Յունիսի վերջին կազանում Հայաստանի եւ Ադրբեյջանի նախագահները կարող են հաւանութիւն տալ Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման վերջնական փաստաթղթին:



Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպով, Ռոբերտ Բրադկէ եւ Բեռնար Ֆասիէ (ձախէն աջ)

«Մենք յոյս ունենք, որ նախագահների կազանում կայանալիք առաջիկայ հանդիպմանը կողմերը հաւանութիւն կը տան կարգաւորման համար առաջարկուող փաստաթղթի արդէն վերջնական տարբերակին: Խօսքն այն փաստաթղթի մասին է, որը կողմերին է առաջարկուել մօտ երեք ամիս առաջ՝ Սոչիում», - Յունիս Ց-ի առաջատան Լեոնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանի հետ աւելի քան մէկ ժամ տեւած հանդիպումից յետոյ լրագրողների հետ գրոցցում յայտարարեց Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիէն:

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի միջնորդութեամբ կազանում Յունիսի 25-ին նախատեսուած է Հայաստանի եւ Ադրբեյջանի նախագահներ Սերժ Ազարբեյջանի եւ Իլհամ Ալիեւի հանդիպումը Լեոնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման հարցի շուրջ:

Քննարկուող փաստաթղթի մասին իր նկատառումները յայտարարեց Մինսկի խմբի նախագահ Իգոր Պոպովը:

«Դրանցով զբաղուած են կողմերի արտգործնախարարները, եւ հնարաւոր է, որ մինչ կազանի հանդիպումն այդ աշխատանքներն աւարտուած կը լինեն», - յայտարարեց Պոպովը:

Ստեփանակերտում յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ռոբերտ Բրադկէն՝ ընդգծելով, որ միջնորդներն ու մասնաւորապէս, ամերիկեան կողմը կտրակապապէս դէմ է հարցը ուժային եղանակով լուծելու ցանկացած փորձի:

«Պատերազմը կարգաւորման չի բերի, այլ միայն կը հանգեցնի նոր զոհերի ու մարդկային նոր տառապանքների», - յաւելեց Բրադկէն:

ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ ԱՅՄԱԴԻՆԵՏԱԴԻ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՅԵՏԱԶԳՈՒԵԼ Է

Կողմերի փոխադարձ համաձայնութեամբ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի այցը Հայաստան յետաձգուել է: Այն, ըստ Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Արմէն Արզումանեանի հաղորդագրութեան, կ'իրականացուի «առաւել յարմար ժամկէտներում»:

Նախատեսուած էր, որ Ահմադինեժադը Հայաստան է ժամանելու Յունիսի 6-ին: Հայաստանի նախագահի հրաւերով կատարելիք այցի օրակարգում էին երկկողմ տնտեսական գործակցութեանը, մասնաւորապէս՝ հներգետիկ ոլորտին առնչուող հարցեր:

Իրանի նախագահի աշխատակազմի Հաղորդակցութիւնների եւ տեղեկատուութեան տարածման բաժնի պետի տեղակալ Մոհամադ Հասան Սալէի-Մառամը այսօր իրանական IRNA լրատուական գործակալութեան հետ գրոցցում ասել է, որ Ահմադինեժադի այցը Երեւան յետաձգուել է, քանի որ «ընդունող կողմը չի հասցրել նախապատրաստել փաստաթղթերը, որոնք պէտք է փոխանակուէին այցի ժամանակ»:

Նա յաւելել է, թէ Իրանի նախագահը Հայաստան կ'այցելի այն ժամանակ, երբ փաստաթղթերը պատրաստ կը լինեն:

Իրանական մէկ այլ՝ ISNA գործակալութեան փոխանցմամբ, Իրանի արտգործնախարարութեան մամուլի քարտուղար Ռամին Մեհմանփարաստը ասել է, որ Իրանի

նախագահը մօտ ապագայում անպայման կ'այցելի Հայաստան:

«Իրանի իսլամական Հանրապետութիւնը եւ Հայաստանը բարեկամական ու բարիդրացիական յարաբերութիւններ ունեն, եւ երկու երկրների իշխանութիւնները մշտապէս կապի մէջ են իրար հետ», - նաեւ ասել է Իրանի ԱԳՆ-ի խօսնակը՝ չչստակեցնելով, սակայն, Ահմադինեժադի այցի կոնկրետ ամսաթիւը:

«Ազատութիւն» ռադիոկայանի տեղեկութիւններով, իրանական պատուիրակութեան կազմում ի թիւս այլ պաշտօնեաների պէտք է լինէին Իրանի արտգործնախարարը, հներգետիկայի եւ առեւտրի նախարարները: Նախատեսուած էին Մահմուդ Ահմադինեժադի հանդիպումները նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեանի հետ: Քննարկուելու էին երկկողմ տնտեսական համագործակցութեանը, մասնաւորապէս հներգետիկ ոլորտին առնչուող հարցեր:

Նշենք՝ Ահմադինեժադի նախկին այցելութիւնը Հայաստան տեղի էր ունեցել 2007թ., բայց նրա այդ այցը շատերի համար անակնկալ կերպով ընդհատուեց Միջուկային զենքերի արտադրութեանը՝ Երեւանի զոհերի յուշահամալիր այցելելուց ընդամէնը ժամեր առաջ, երբ Իրանի նախագահն իբր իր երկրում առաջացած անյետաձգելի գործերի պատճառով հեռացաւ Հայաստանից:

ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ ՄԱՐԻ ԵՈՎԱՆՈՎԻՉԻՆ ՊԱՐԳԵԻԱՏՐԵԼ ԱԳՆ ՅՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ



ԱՄՆ դեսպան Մարի Եովանովիչի եւ Հայաստանի ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանի հանդիպումը

Հայաստանի ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանն Յունիսի 7-ին ընդունել է ԱՄՆ դեսպան Մարի Եովանովիչին՝ Հայաստանում դիւանագիտական առաքելութեան աւարտի կապակցութեամբ:

ԱԳՆ մամուլի ծառայութիւնից NEWS.am-ին յայտնում են, որ Նալբանդեանը բարձր է գնահատել դեսպան Եովանովիչի անձնական աւանդը Հայաստանի եւ Միացեալ Նահանգների միջեւ հաստատուած բարեկամական յարաբերութիւնների ամրապնդման գործում:

«Վաշինգտոն իմ վերջին այցելութեան ընթացքում նշուեց, որ հայ-ամերիկեան յարաբերութիւնները բարձրացուել են որակապէս նոր մակարդակի: Եւ այդ գործում

մեծ է Ձեր ներդրումը», - ասել է նա: Ծնորհակալութիւն յայտնելով ջերմ խօսքերի համար՝ դեսպան Եովանովիչը նշել է, որ իր համար հաճելի էր աշխատել Հայաստանում եւ իր աշխատանքի ընթացքում ցուցաբերուած ջակցութեան եւ արդիւնաւէտ համագործակցութեան համար:

Ձրուցակիցները մտքեր են փոխանակել հայ-ամերիկեան երկկողմ յարաբերութիւնների, ինչպէս նաեւ մի շարք տարածաշրջանային եւ միջազգային հարցերի շուրջ:

Նախարար Նալբանդեանը դեսպան Եովանովիչին մաղթել է հետագայ յաջողութիւններ իր դիւանագիտական գործունէութեան մէջ եւ նրան պարգևատրել ԱԳՆ յուշամեդալով:

ԴԱՎՈՒԹՕՂՈՒՄ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՒՄ «ՃԵՂՔՄԱՆ ԴՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ» Է ՏԵՍՆՈՒՄ

Թուրքիայի արտգործնախարար Ահմէթ Դավութօղլուն յայտարարել է, թէ Ղարաբաղեան գործընթացում «ճեղքման դրական նշաններ» է տեսնում՝ միաժամանակ ողջունելով Ադրբեյջանի «վճռական եւ լաւատեսական» դիրքորոշումը հակամարտութեան առնչութեամբ:

Անցեալ շաբաթ Հոռոմում լրագրողների հետ գրոցցում Դավութօղլուն յայտնել է, որ հնարաւորութիւն է ունեցել ողջունել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին աւտոբուսում, որով նրանք վերադառնում էին Իտալիայի միաւորման 150-ամեակին նուիրուած հանդիսութիւնից: Միաժամանակ, նա նշել է, թէ աւելի շատ ժամանակ տրամադրել է Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ գրոցցին՝ հնարաւորութիւն ունենալով քննարկել Լեոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի «որոշ մանրամասներ»:

Zaman պարբերականի փոխանցմամբ՝ Թուրքիայի արտաքին

քաղաքական գերատեսչութեան ղեկավարը ասել է, թէ յոյսեր է կապում նախագահների կազանում կայանալիք հանդիպման հետ: Նա յայտնել է, որ հնարաւորութիւն է ունեցել Ալիեւի հետ քննարկել Հայաստանի եւ Ադրբեյջանի միջեւ խաղաղ բանակցութիւնները եւ Լեոնային Ղարաբաղի շուրջ վերջին զարգացումները:

«Նշանները [ճեղքման] դրական են: Մեծ ութնեակի եւ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների կողմից արուած յայտարարութիւնները նպատակ ունեն արագացնել խաղաղ գործընթացը: Սպասենք կազանի հանդիպման արդիւնքներին: Յուսով ենք, որ կը տեսնենք որոշ դրական քայլեր», - Ահմէթ Դավութօղլուի խօսքերն է փոխանցում Zaman-ը:

«Ուրախ էի տեսնել պարոն Ալիեւի վճռակալութիւնը եւ լսել նրա աւելի լաւատեսական տեսակէտը», - յաւելել է Թուրքիայի արտգործ նախարարը:

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈՒԱՆՅՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԱԾԵԼ

2011 թ. Յունուար-Ապրիլին բանկային համակարգի միջոցով ոչ առեւտրային նպատակով Հայաստան է փոխանցուել 357 մլն դոլար: Այդ մասին նշուած է ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած Ապրիլ ամսուայ տեղեկագրում: Նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ տրասֆերտների ծաւալը աճել է գրեթէ 24 տոկոսով:

Տրանսֆերտների աճը հիմնականում տեղի է ունենում ռուսաստանեան աղբիւրների հաշուին, կապուած, հաւանաբար, նաւթի միջազգային գների աճի եւ այդ երկրի տնտեսութեան աշխուժացման հետ: Միայն Ռուսաստանից 4 ամսուայ փոխանցուել է 281 մլն դոլար, որն ընդհանուր տրանսֆերտների 78.7 տոկոսն է:

Տրանսֆերտների աճ արձանագրուել է նաեւ ԱՄՆ-ից, Ուկրաինայից, Ղազախստանից, իսկ ահա Գերմանիայից կամ Չինաստանից տրանսֆերտները անկում են ապրել:

ՍԱ ԱՅԼԵԲՍ ԿՈՆՖԼԻԿՏ ԶԵ ՆԱԽԱԳԱՅ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՒ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՄԻՋԵՒ. Ո՞ՐՄ ՄԻՋԵՒ Է ԻՐԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ

Henaran.am-ի հարցազրույցը Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ռիչըրդ Կիրակոսեանի հետ

Պարոն Կիրակոսեան, ինչպե՞ս կը գնահատեք Հայաստանի ներքաղաքական զարգացումները: Ընդդիմադիր ՀԱԿ-ն արդեն խօսում է պատուիրակությունների մակարդակով երկխոսելու մասին, բայց շարունակում է պնդել արտահերթ նախագահական ընտրությունների պահանջը, որի շուրջ ՀԱԿ լիդերների խօսքով, պետք է երկխոսեն իշխանության հետ: Իշխանությունը նման սցենարը միանշանակ բացառում է:

ՐՆԳՀԱՆՐԱԿԷՍ, մենք պետք է ողջունենք այս զարգացումները: Մինչև հիմա ակնյայտ էր, որ որեւէ տարբերակ չկայ Հայաստանի իշխանությունների ու ժողովրդի համար՝ վերադառնալու Մարտի 1-ի դեպքերին նախորդած շրջանում տիրող իրավիճակին: Բարեբախտաբար, իշխանությունը վերջապես հասկացաւ, որ առաջ գնալու այլընտրանք չկայ:

Հետաքրքիրն այն է, որ եւ ՀԱԿ-ը եւ իշխանությունները, կիսում են իրենց շահերը: Նրանք կիսում են նաեւ վտանգները: Սա այլեւս կոնֆլիկտ չէ նախագահ Սարգսյանի եւ առաջին նախագահ Տէր-Պետրոսեանի միջեւ: Իրական կոնֆլիկտը հենց ղեկավարող էլիտայի, նախագահ Սարգսյանի եւ երկրորդ նախագահ Քոչարեանի միջեւ է: Սա ոչ թէ երկու նախագահների միջեւ անձնական կոնֆլիկտ է, այլ կոնֆլիկտ է նրանց ազդեցութեան տակ գտնուող ուժերի միջեւ: Սա կոնֆլիկտ է «Բարգաւաճ Հայաստան»-ի եւ «Հանրապետական»-ի միջեւ:

Այս առումով ՀԱԿ-ը եւ ցանկացած այլ ընդդիմադիր շարժում աւելի քիչ վտանգ է ներկայացնում իշխանութեան համար: Աւանդական կոնֆլիկտը՝ իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ փոխարինուել է: Առաջին անգամ Հայաստանի քաղաքական պատմութեան մէջ իրական կոնֆլիկտը քաղաքական էլիտայի մեջ է: Երկրորդ զարգացումն այն է, որ օլիգարխները եւ փակ տնտեսական համակարգը վտանգում են հենց պետականությունը՝ չվճարելով հարկեր եւ վտանգելով իշխանութեան լեգիտիմությունը: Երբ սա տեղի ունեցաւ Ռուսաստանում, այն ժամանակուայ նախագահ Պուտինը յստակ գիծ գծեց եւ տեսանք, թէ ինչ կատարուեց ԵՈՒԿՕՍ-ի հետ: Հայաստանում մենք հասնում ենք այնպիսի իրավիճակի, երբ իշխանությունը պետք է մարտահրավեր



Նետի օլիգարխներին եւ բոլորին, ոչ թէ որոշներին, ինչ-որ մէկի օլիգարխներին, այլ բոլորին:

Բայց օլիգարխները սերտաճած են իշխանութեան հետ, կարծում էք իշխանությունը կը գնա՞ր նման քայլի:

Այս սցենարի տակ իրական մարտահրավերը եւ թեստը կը լինի այն, թէ արդեօ՞ք սա մի քիչ ուշացած չէ: Իշխանությունն այլընտրանք չունի: Ի՞նչ է հարկաւոր օլիգարխների առաջն առնելու համար: Քաղաքական կամք: Պահանջուում է օրէնքի իշխանություն: Այս առումով, բաւականին նպատակաշարժար է ունենալ արդարադատութեան հենց այս նախարարին, հենց այս կառավարութեան մէջ, հենց այս ժամանակահատուածում: Օլիգարխներն ու օլիգարխիկ համակարգը խորհրդարանում են, ունեն տնտեսական մենաշնորհներ, եւ պահանջուում է վերահսկել նրանց ուժը:

Մի մոռացէ՛ք, որ դարասկզբին ԱՄՆ-ում էլ կային օլիգարխներ՝ Ռոքվելլերը, Կարնեգին: Նրանց հզօրութիւնն էլ էր վտանգում պետությունը եւ նախագահ Ռուզվելտը կարողացաւ նրանց բերել համակարգ եւ ստիպեց ենթարկուել օրէնքներին ու տնտեսութեան կանոններին: Նա ջարդեց մենաշնորհները եւ արեց դա քաղաքական կամքի շնորհիւ: Նոյնը կարող է եւ պէտք է արուի Հայաստանում: Մենք տեսնում ենք նշաններ՝ ուղղուած օլիգարխիկ համակարգի դէմ, նոյնիսկ որոշները յաջորդ խորհրդարան չեն գնայ: Մենք տեսնում ենք զարգացումներ եւ տնտեսութեան, եւ քաղաքականութեան մէջ: Իհարկէ, շատ աւելին պէտք է արուի, սակայն յաջորդ խորհրդա-

րանը չի արտացոլելու գործող խորհրդարանը: Այնտեղ աւելի քիչ է լինելու բիզնեսի եւ քաղաքականութեան այս միախառնումը:

Դուք նշեցիք, որ իրական կոնֆլիկտը երկրորդ եւ գործող նախագահների միջեւ է: Կրկին խօսակցություններն ակտիւանում են Ռոբերտ Քոչարեանի՝ մեծ քաղաքականութիւն վերադարձի մասին: Կարծում էք, նա կը վերադառնա՞, եւ այդ դէպքում, ի՞նչ կը փոխուի քաղաքական ուժերի յարաբերակցութեան մէջ:

Ակնյայտ է, որ իւրաքանչիւր անցած օրուայ հետ նախկին նախագահն աւելի նախկին է դառնում, իսկ գործող նախագահն՝ աւելի գործող: Այս քաղաքական կոնտրաստից ելնելով, ես չեմ կարծում խելամիտ կը լինի հետ գնալ դէպի պատմութիւն: Իհարկէ, իւրաքանչիւր երկրում նախկին նախագահները յարգուած են, բայց նոյնիսկ ԱՄՆ-ի նախկին նախագահ Քլինթոնը երբեք չի վերադառնալ որպէս նախագահ:

Իսկ քաղաքական պրոյեկտների միջոցով, ասե՛ք, երրորդ ուժի:

Ես շատ յուսեմ եմ տրամադրուած իւրաքանչիւր երրորդ ուժի նկատմամբ, որովհետեւ դա նշանակում է, որ մենք ունենք առաջին եւ երկրորդ ուժեր: Իւրաքանչիւր քաղաքական պրոյեկտ, լինի դա ամերիկացիների, եւրոպացիների, թէ ռուսների կողմից ստեղծուած, Հայաստանում չի աշխատի: Իրականում, Հայաստանը Վրաստանը չէ՝ Շելվարդնաձէի օրօք, ոչ էլ Ուկրաինան՝ Նարնջագույն լեղափոխութիւնից առաջ: Իրական ժողովրդավարական փոփոխութիւնները Հայաստանում պէտք է լինեն ներսից: Դա չաշխատեց նաեւ Իրաքում եւ Ղրղզստանում: Ժողովրդավարութիւնը չի կարող սեղանի վրայ դրուիլ եւ այն չպէտք է հրաւիրուի Մոսկուայից կամ ԱՄՆ-ից: Դա հայ հասարակութեան խնդիրն է՝ ստեղծել հայկական ժողովրդավարութիւն:

Պարոն Կիրակոսեան, կատարուող փոփոխությունների ֆոնին արտահերթ նախագահական ընտրությունների հաւանականություն տեսնո՞ւմ էք եւ իշխանություն-ՀԱԿ երկխոսութեան համագոյացւումն ինչպե՞ս էք պատկերացնում:

Երկար ժամանակ ես ասում էի, որ արտահերթ նախագահական ընտրութիւններ հնարաւոր են: Դա ղեռնու հնարաւոր է, բայց դա կախուած է ՀԱԿ-ից: Դա կախուած

է «Բարգաւաճ Հայաստանի» եւ «Հանրապետականի» միջեւ եղած կոնֆլիկտից: Մենք յուսով ենք, որ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում աւելի ուժեղ եւ արդիւնաւէտ խորհրդարան կ'ունենանք, որը կը կարողանայ հաւասարակշռող դեր խաղալ:

Մենք պէտք է մի շատ կարեւոր փաստ ընդունենք, շատ մեծ տարբերութիւն կայ գալիք եւ նախկին ընտրութիւնների միջեւ: Ե՛ւ խորհրդարանական, ե՛ւ նախագահական ընտրութիւնները չեն կարող լինել այնպիսին, ինչպիսին նախկինում էին: Ակնկալիքները շատ աւելի բարձր են: Ընտրութիւնները պէտք է հակասորէն բարելաւուեն: Հայաստանն այլեւս չի կարող իրեն թոյլ տալ հերթական անազնիւ եւ անագատ ընտրութիւնները: Ինչպէս Հայաստանի ներսում, այնպէս էլ դրսից, նոր ճնշումներ են լինելու: Այլ կերպ ասած, ընտրութիւնների կազմակերպումն ու ընթացքը շատ աւելի կարեւոր է լինելու, քան նրա արդիւնքը:

Իսկ ինչպիսի՞ն կը լինի արդիւնքը Ձեր կարծիքով:

Շատ դժուար է կանխատեսել ընտրութիւնների արդիւնքները, յատկապէս, երբ ակնկալում ենք ազատ եւ արդար ընտրութիւններ, բայց ընդհանուր առմամբ, գործող իշխանութիւնն աւելի հզօր դիրքերում է, քան նախկինում, ընդդիմութիւնն էլ ուժեղ դիրքերում է: Քաղաքական էլիտայի այլ տարրերը, ինչպէս օրինակ, կոալիցիոն երկրորդ եւ երրորդ գործընկերները, շատ աւելի թոյլ են: Իհարկէ, դա իր ազդեցութիւնը կ'ունենայ արդիւնքի վրայ:

Պարոն Կիրակոսեան, Դուք չբացառեցիք արտահերթ ընտրությունների հնարաւորութիւնը՝ պայմանաւորելով 774-Բ74 կոնֆլիկտով: Ի՞նչ զարգացումների դէպքում կարող եմք ականատես լինել արտահերթ ընտրությունների սցենարի:

Եթէ «Հանրապետական» կուսակցութիւնը վստահ է իր ուժերին, երբեք արտահերթ ընտրութիւնների կարիք չի զգայ: Եթէ նա աւելի անվստահ դառնայ, հնարաւոր է, որ արտահերթ ընտրութիւնների կազմակերպման որոշում կայացուի, որպէսզի կանխուի «Բարգաւաճ Հայաստանի» արձագանքը: Մենք ղեռնու չզիտենք, սա ժամանակի հարց է:

Ջրուցեց՝ Մարիաննա Ղախրամանեանը

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES


Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածնող է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՆՈՒԻՐՈՒԿԱԾ ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆԻ «ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅԻ ՄՈՒՏՔԸ ՄՈՒՄԱՆԵՐԻ ԼԵՐԱՆ ՇԷՆ» ԳԻՐՔԻՆ

Գալիֆորնիահայ Գրողներու Միութիւնը Յունիս ամսուան իր հերթական հաւաքը նուիրած էր ծանօթ գրող եւ «Մասիս» շաբաթաթերթի աշխատակից Պօղոս Լագիսեանին, շնորհանդէսով մը ողջունելու իր վերջերս լոյս ընծայած նոր հրատարակութիւնը՝ «Տիգրան Արքայի Մուտքը Մուսաների Լերան Շէն» հատորին:



Արդարեւ Հինգշաբթի, Յունիս 2ին, 2011 Կլենտէյլի Հանրային գրադարանին մէջ սոյն միջոցառումին ներկայ էր գրողներու եւ հարազատներու ընտրանի հասարակութիւն մը:

Օրուան հանդիսավարն էր Գրողներու Միութեան վարչութեան փոխ նախագահ Պօղոս Գուբէլեան: Իր ելոյթին մէջ ան դրուատեց Պօղոս Լագիսեանը, զինք որակելով «ազնուական մարդ»: Ան ցաւով անդրադարձաւ որ ներկայիս սկսած է նօսրանալ ընթերցասէր հասարակութիւնը:

ըննասիրական աւիշներ ունեցող այս երկը բնութագրեց նաեւ որպէս պատմութիւն եւ վէպ որ գրուած է ինքնատիպ ոճով եւ մեծ պաթոսով:

Բանաստեղծ Գարուշ Հարեանց իր սրտի խօսքին մէջ Պօղոս Լագիսեանի աշխատասիրութիւնը արժեւորեց որպէս մատենաներ կամ «վիպակ» իսկ հեղինակը՝ «գործող հրաբուխ»...:


«Մասիս»ի խմբագրական կազմէն գրող Սահակ Թութեան իր ողջոյնի խօսքին մէջ նկարագրեց Պօղոս Լագիսեանի բարեմասնութիւնները որպէս ժամանակի անցորդ մը հայոց պատմութեան մէջ, ինչպէս նաեւ պայծառ մտքի տէր ջերմ հայրենասէր մը եւ զեղազէտ մըն միանգամայն:

Յակոբ Գարատանայեան կարդաց ընտիր հատուածներ «Տիգրան Արքայի մուտքը Մուսաների Լերան Շէն» հատորին: Կարդացուեցան նաեւ շնորհաւորագրեր Վահագն Տատրեանէն, Խաժակ Արք.էն, սիրուքի նախարարութեանէն, Մուշեղ Արք.էն եւ այլոց կողմէ:

Ընտանիքի կողմէ ողջոյնի եւ բարեմաղթանքներու ելոյթներով հանդէս եկան Ռամբլա Լագիսեան, Սերոբեան եւ Նայիրա Լագիսեան-Գարաօղլանեան:

Վերջին խօսք առնողն եղաւ հեղինակը՝ Պօղոս Լագիսեան: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր ելոյթ ունեցողներուն եւ գրողներու Միութեան վարչութեան: Այնուհետեւ ինք իր մասին արտայայտուելով յարեց. «Ես հայրենապաշտ եմ: Իմ ազգը, իմ նախնիներն են այստեղ: Մենք պէտք չէ միայն եղեռն չիշենք, այլեւ մեր յղթանակներն ալ, որոնք բազում են...»: Պօղոս Լագիսեանի հայրենասիրական մէկ այլ արտայայտութիւնն ալ հետեւեալն էր. «Մի օր պիտի պարենք «քոչար»ի Արարատի շուրջը, ինչպէս որ պարեցինք՝ Արագածի շուրջը»...:

Գ. ՄՈՒՈՅԵԱՆ



կութեան թիւը եւ յորդորեց սիրելի հայ գրականութիւնն ու մշակոյթը:

Պ. Լագիսեանի նոր գիրքի մասին զեկուցումով հանդէս եկաւ «Կամարակ» թերթի խմբագիր Յակոբ Մկրտիչեան: Ան անդրադառնալով «Տիգրան Թագաւորի Մուտքը Մուսաների Լերան Շէն» գործին՝ ըսաւ թէ հեղինակը գայն որակած է «էսպէ» մը: Սակայն իր կարծիքով աւելի լաւ պիտի ըլլայ գայն բնութագրել «խոկումներ»: Գիրքը վերականգնումն է մեր արքաներու աւանդութիւններուն եւ ունի ազգային հասարակական իմաստ: Գրուած է քնարական ոճով եւ ունի բանաստեղծական ներշնչումներ: Ուստի հեղինակին թելադրեց նաեւ գրել բանաստեղծութիւններ:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ գրող Գէորգ Քրիստինեան եւ Լագիսեանի նոր հրատարակութիւնը որակեց «Հսկայական գործ»: Հայ-

ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆԻ ՄՐՏԻ ԽՕՍՔԸ՝ ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆԻ ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻՆ

Պօղոս Լագիսեան գրողը ժամանակի ճամբորդն է հայոց պատմութեան ընդմէջէն: Սակայն անտարբեր կամ անհոգ զբօսաշրջիկ մը չէ ան: Իր իւրօրինակ ճամբորդութիւնը միայն ապրելով կը կատարէ հայոց իւրովի պատմութեան մը էջերէն ուր ընդելուզուած են մեր նախնիներու հերոսապատումն ու ի՛ր՝ հեղինակի անձնապէս ապրած կեանքը: Ծանապարհորդութեան մեկնակէտն է Լագիսեանի ծննդավայր Մուսա Լերան Եօղունջուղ գիւղը, որուն կը յաջորդէ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ անցուցած ժամանակահատուածը, ապա կարճատեւ բնակութիւնը Լիբանանի Այնճար հայկական աւանը, յետոյ Հայաստանի մէջ ապրած տասնամեակները 1947էն մինչեւ 1994, ու վերջապէս անոնց յաջորդող տարիները Միացեալ Նահանգներու մէջ մինչեւ այօր:


Հայոց պատմութիւնը սիրով ու կարօտով վերայցելող հեղինակը ջերմ, կրակոտ ու նոյնիսկ կրքոտ զգացումներով կը կատարէ ժամանակի իր այս ճամբորդութիւնը: Հայրենի աշխարհի մէջ ամէն քայլափոխին իրեն կը սպասեն սիրտը թունդ հանող ջահեր ու հրեղէն ոգի, հրդեհուած հող ու յաւերժ լոյսի շող, այրող քարեր եւ անշէջ հրայրք, լեռներէն դէպի արեւ ժայթքող կրակներ ու հազար գոյներու ծաղիկներ: Ժամանակ վեր սրբութիւնն է ամէն քար ու ժայր, ծառ ու ծաղիկ, մանչ եւ պարմանուհի:

Ականջ տուէք. «Արիական դիւցազներգութեան կրակածին Մասուն աշխարհի Դաւիթի նման, հեռուից եկայ, որ զնամ հասնեմ Արմինայի կրակածին հայոց լեռներ, նրանց զագաթներէրց ժայթքած կրակով հոգուս արմենական ատրուշան վառեմ, նրա արեւածին արքայի հետ այնտեղից հասնեմ

Մուսաների Պաշտամունքի Լերան լանջի շէներ: Նորէն անցնեմ նրա ճամբաներով, բոկոտն քայլեմ նրա հողին, այնտեղ հոսած նախնիների արարման քրտինքը, նրանց ազատութեան մարտերի հոսած արեան կրակը փոթորկի իմ սրտին:»

Այստեղ հարազատ փոխ-ամբողջացմամբ գիրար կ'ողջագուրեն երեւակայութիւնը, քնարականութիւնը, հիւմանիզմը, հայրենասիրութիւնն ու անզուսպ դիւցազներգութիւնը: «Կանգնում (եմ) Մուսաների Պաշտամունքի Լերան լանջի ձորի բարձունքին: Մի պահ նստում ժայռին, ունկնդրում ձորի յատակից վազող ջրերի երգը, անուշ երանութիւն պարզեւող բնութեան համանուագը: Տիեզերական առեղծուածի բնութեան հէքիաթ է այն:...Բանական մարդիկ ե՞րբ պիտի հաւատան բնութեան առեղծուածին: Նա է ճշմարտութիւնը, կեանքը, ինքն էլ է նրա անդադրում գարգացման արգասիքը եւ ոչ թէ երեւակայածին Արարչագործութիւն: Մա՛րդ, սքանչացիր քու երկիր մոլորակով, սքանչացիր անհուն տիեզերքով, այնտեղից քեզ փնտրող երկիրների բանական էակների լինելիութեամբ, այնտեղ պայթող կրակալոյս աստղերով, բռնկող, ժայթքող աստղաբոլբոլներով: Սքանչացիր կեանքի հէքիաթով, քու բանականութեամբ ստեղծած արարչութիւններով...:»

Ինչ ալ կոչենք գայն - վէպ, արձակ բանաստեղծութիւն, խոկումներ կամ, իր յորջորջումով՝ էսպէ - պածառ միտքի եւ յախուռն երեւակայութեան ծնունդ է Լագիսեանի կերտած զեղազիտական ներդաշնակ, ոգեշունչ աշխարհը: Իր գրական այս ստեղծագործութեան թուիչ դիւցազնական տարողութեան հետ համեմատած՝ կը նսեմանան այն երկրորդական ու երրորդական թերիները գորս կարելի է պատեհ առիթով փափսալ իր ականջին:


 60th ANNIVERSARY OF CONSECRATION AND ORDINATION INTO THE PRIESTHOOD
 OF FORMER DIOCESAN PRIMATE
 HIS EMINENCE ARCHBISHOP VATCHÉ HOVSEPIAN
 DIVINE LITURGY
 THURSDAY, JUNE 16, 2011
 6:30 PM
 ST. LEON ARMENIAN CATHEDRAL
 3325 N. GLENOAKS BLVD. BURBANK, CA 91504
 CELEBRANT AND HOMILIST H.E. ARCHBISHOP VATCHÉ HOVSEPIAN
 PRESIDED BY HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN PRIMATE
 WITH THE PARTICIPATION ALL DIOCESAN PRIESTS
 RECEPTION TO FOLLOW SERVICE AT PAUL BROTHERS' GALLERIA
 ALL FAITHFUL ARE INVITED

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Թայրոպիոթքի բուժում:
 Գլխացաւ, վզի, մէջքի, յօդադիւն և մկանային ցաւեր:
 Ինքնաշարժի վթարի նետանցով պատահած վնասուածքներու բուժում:
 Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

Massis Weekly

Volume 31, No. 21

Saturday, JUNE 11, 2011

OSCE Mediators Hope For Armenian-Azeri Framework Accord



YEREVAN -- International mediators said on Wednesday that they expect the presidents of Armenia and Azerbaijan to reach framework agreement on the Nagorno-Karabakh conflict at their upcoming meeting in Russia.

"We hope that they will at once approve the final variant of the basic principles [of the conflict's resolution,]" Bernard Fassier, the French co-chair of the OSCE Minsk Group told journalists after he and his U.S. and Russian colleagues held talks with Karabakh's ethnic Armenian leaders in Stepanakert.

"We hope that the parties will display a constructive approach in Kazan," Igor Popov, the group's Rus-

sian co-chair, said, for his part. He said the Armenian and Azerbaijani foreign ministers are now trying to iron out the remaining disagreements on the basic principles proposed by the three mediating powers.

"It's possible that this work will be completed in Kazan," Popov added, referring to the venue of the next Armenian-Azerbaijani summit.

Presidents Serzh Sarkisian and Ilham Aliyev as well as their Russian counterpart, Dmitry Medvedev, are expected to meet in the Russian city by the end of this month. Their foreign ministers will discuss preparations for that meeting in Moscow this weekend.

Continued on page 4

Armenian Authorities Scoffs at Opposition Dialogue Proposals

YEREVAN -- President Serzh Sarkisian began a dialogue with the Armenian National Congress (HAK) "a long time ago" and will therefore not form a special negotiating team expected by the opposition grouping, his chief of staff said on Tuesday.

Karen Karapetian also made clear that the conduct of fresh national elections, the key HAK demand, is non-negotiable for the head of state.

"It is not difficult to notice that that dialogue started a long time ago, is

proceeding quite productively and has already led to a number of positive changes. That is so obvious that talk of starting a dialogue is at least bewildering," Karapetian said in written comments to the Novosti-Armenia news agency released by the presidential press office.

"As for the [HAK] proposal to form delegations and negotiate over pre-term elections, both the proposed

Continued on page 4

Russian General:

We Will Intervene to Protect Armenia

MOSCOW -- "A few weeks ago there was some back and forth between Armenians and Azerbaijanis about whether Russia would come to Armenia's defense in the case of a war over Nagorno-Karabakh. Well, now a top Russian general has weighed in, and he sounds pretty certain that Russia would get involved," writes Eurasianet.org.

The website reported that General Andrei Tretyak, the Chief of the Main Operations Directorate of the Defense Ministry, said the possibility of conflict in the region is high, but argued that it is gradually decreasing as a result of Russian efforts to reduce tension in the region.

During the discussion on Karabakh with certain analysts Tretyak made clear that the possibility of conflict in that region is high, but argued that it is gradually decreasing as a



General Andrei Tretyak

Քաղաքին հարաւային կողմէն կ'անցնէր Պարսկաստանի Աքեմենեան թագաւոր Դարես Ա.-ի (Ք. Ա. 522-486) շինուի տուած Ելամի (Էլամ) թագաւորութեան մայրաքաղաքը՝ Շոշը (Շուշ, Շուշան, Մուս) այդ թուականներուն Փոքր Ասիոյ արեւմտեան կէսը գրաւած Լիդիայի մայրաքաղաք Սարգեսի (Սարգիս, այժմ՝ Սարթ) կապող «Արքայական ճանապարհ»-ը: Տիգրանակերտ, Մանգկերտէն ու Զարեհաւանէն անցնող, «Արքունի Պողոտայ»-ով ալ կապուած էր Արտաշատին: Որով դիրքը յարմար էր տարանցիկ առեւտուրի համար, ուստի կարճ ժամանակու մէջ արագորէն բարգաւաճած էր: Բնակչութեան թիւը հասած էր հարիւր հազարի: Եղած էր առեւտուրի եւ հելլենական մշակոյթի մեծ կեդրոն: Պատմութեան մէջ յիշուած է որպէս հզոր ամրութիւններ եւ լաւ կազմակերպուած պաշտպանութիւն ունեցող քաղաք:

Տիգրանակերտ, Տիգրան Բ.-ի մահէն յետոյ, կը դադարի մայրաքաղաք ըլլալէ, սակայն կը մնայ որպէս Հայաստանի մեծագոյն քաղաքներէն մին:

Տիգրան Մեծ իր թագաւորութեան շրջանին կառուցած է չորս Տիգրանակերտներ, որոնցմէ միուն աւերակները, մի քանի տարի առաջ, յայտնաբերուեցան Արցախի Մարտակերտի շրջանին մէջ: Սա ինքնին կը փաստէ, թէ Արցախ, աւելի քան 2,000 տարի է ի վեր կը պատկանի հայոց:

Այժմ Տիգրանակերտ, Տիարպաքըր նահանգին արեւելեան սահմանի Սիլվան գիւղաքաղաքի Ֆարդիսի գիւղի մօտ աւերակ վիճակի մէջ է:

Յայտնի գիտնական Լեման-Հառայտ 1899 թուականին կը յայտնաբերէ յունարէն արձանագրութիւններ: Շնորհիւ այդ արձանագրութիւններու կարելի կ'ըլլայ



ապացուցանել, թէ անոնք Տիգրանակերտի աւերակներն են:

Արշակունիներու օրով (Ք. վ. 66-428) մինչեւ Մեծ Հայքի Հռոմի ու Պարսկաստանի միջեւ բաժանումը (387), Տիգրանակերտ կ'ըլլայ երկրի հարաւային սահմանի Աղձնիքի բոլորստութեան՝ կուսակալութեան կեդրոնը: Հռոմի ձեռքը անցնելէ վերջ կը կառուցուին Տիգրանակերտի նոր պարիսպները՝ մօտաւորապէս 10 մ. բարձրութեամբ ու 3 մ. հաստութեամբ: Քաղաքը կը վերանուանուի Մարտիրոսապոլիս կամ Մարտիրոսապոլիս: Հայկական աղբիւրներու մէջ Տիգրանակերտ կ'անուանուի նաեւ Մարտիրոսաց քաղաք, Մարտիրոսք եւ աւելի յաճախ՝ Նիւրեհար:

640 թուին Պէգր արաբական ցեղը կը գրաւէ Ամիդ (Ամիթ, Էմդ) քաղաքը եւ գայն կ'անուանէ Տիեարը Պէգր (Պէգրի երկիր), որ ժամանակի ընթացքին կ'ըլլայ Տիեարպէքր եւ այժմ ալ՝ Տիեարպաքըր: Պէգրերու տոհմակից Շայբանիներն ալ կը գրաւեն Տիգրանակերտը եւ գայն կ'անուանեն Մայսֆարիկին (Միսֆարիկին, Միսֆարիկին, Մուֆարիկին):

Երբ արաբները, 956 թուին, մի քանի բիւզանդական քաղաքներ կ'աւերեն, ըստ արաբ պատմագիր Իսն ալ Ասիրի, բիւզանդացիներն ալ Նիւրեհարի (Տիգրանակերտ) վրայ կը յարձակին: Կը կողոպտեն, կ'աւերեն ու կը հրկիզեն քաղաքը եւ ժողովուրդը գերի կը տանին:

1515-ին քաղաքը կ'անցնի Օսմանեան տիրապետութեան տակ եւ կ'ըլլայ Տիարպէքր նահանգի Միսֆարիկին գաւառի համանուն կեդրոնը:

19-րդ դարու վերջաւորութեան քաղաքի հայ բնակչութիւնը մօտաւորապէս 45,000 էր: Կային 7 դպրոցներ 1,500 երկսեռ աշակերտութեամբ, որոնցմէ երկուքը ազգային վարժարաններ էին: Մնացեալները կը պատկանէին Անձնուէր, Հայրենասիրաց, Մեսրոպեան, Պատանեաց եւ Համազգային կազմակերպութիւններուն:

Ըստ տեղւոյն ֆրանսացի փոխ հիւպատոսին, 1895-ին, համիդեան ջոկատներ կը ջարդեն մօտ 3,000 անձ, կը հրկիզեն մօտ 2,000 տուն եւ 2,500 խանութ:

Քաղաքի հայ բնակչութեան ջախջախիչ մեծամասնութիւնը գոհ կ'երթայ Երիտթուրքերու կառավարութեան կազմակերպած 1915-ի ջարդերուն:

Ըստ ջարդերու ընթացքին

իր հաւաքած փաստերը հրատարակած գերմանացի հոգեւորական Տօթթ. Եոհաննէս Լեփսիուսի (Dr. Johannes Lepsius - 1858-1926) Տիարպէքրի նահանգի բնակչութեան թիւը 471,500 էր: Բնակչութիւնը կը բաղկանար քիւրտերէ՝ 200,000, հայերէ՝ 105,000, թուրքերէ՝ 63,000, ասորիներէ՝ 60,000, չերքէզներէ՝ 10,000, եգիպտներէ՝ 4,000, հրեաներէ՝ 1,500, յուններէ՝ 1,000.....:

Ըստ «ՎիճԱԿԱՅՈՅՑ Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ» 1903-ին հրատարակուած տուեալներուն, 1901-1902 տարեշրջանին թուրքիոյ մէջ կային 818 վարժարաններ, 60,315 աշակերտներով, 22,380 աշակերտուհիներով, 1,597 ուսուցիչներով եւ 556 ուսուցչուհիներով:

Ըստ «Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկիչ Հիւանդանոցի Հայոց»-ի 1904 տարուայ թիւին, Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ կային Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ 65 Առաջնորդական Վիճակներ (Թեմեր), որոնցմէ 45-ը ենթակա էր Պոլսոյ Պատրիարքութեան, 5-ը՝ Երուսաղէմի Պատրիարքութեան, 13-ը՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ 2-ն ալ՝ Աղթամարի Կաթողիկոսութեան: Գոյութիւն ունէին 1958 եկեղեցիներ եւ 228 վանքեր: Հայ Կաթողիկէ Հասարակութիւնը ունէր 21 վիճակ՝ 75 եկեղեցիներով եւ 1 վանքով: Հայ Բողոքական Հասարակութիւնը ունէր 156 ժողովարան (եկեղեցի):

Այժմ Պոլսոյ մէջ կան 16 վարժարաններ եւ 38 եկեղեցիներ, իսկ Փոքր Ասիոյ մէջ ալ՝ բոլորն ալ գործօն 7, որոնցմէ մին է Ս. Կիրակոս Եկեղեցին:

Օսմանացիներ Տիարպէքրը 1515-ին գրաւելէ յետոյ, քաղաքի Մայր եկեղեցին՝ Ս. Թէոտորոսը, 1515-1518 թուականներուն կը վերածեն մզկիթի, գայն կոչելով Գուրշուշու ճամբի: 629-ին կառուցուած եւ Բագրատունեանց Աշոտ Ա.-ի (885-890) նորոգած Ս. Աստուածածին եկեղեցին ալ կ'ըլլայ քաղաքի գլխաւոր մզկիթը՝ Ուլու ճամբի: Մզկիթի վերածուած են նաեւ Ս. Գէորգ, Ս. Երրորդութիւն եւ Ս. Յովհաննէս եկեղեցիները:

Հայեր, 20-րդ դարու սկիզբը, Տիարպէքրի մէջ ունէին Ս. Սարգիս եւ Ս. Կիրակոս եկեղեցիները: Ս. Կիրակոս Եկեղեցւոյ անուան առաջին անգամ կը հանդիպինք հայագիւ ճանապարհորդ Սիմէոն

ՏԻՂՐԱՆԱԿԵՐՏԻ ԵՕԹԻՈՐԱՆ ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Շարունակում էք 14-Էջ

Լեհացիի (1584-1637) «Ուղեգրութիւն» անունակալ հատորին մէջ: Սիմէոն 1608-19 տարիներուն ճանապարհորդած է դէպի Իտալիա, Ռուսիա, Պուլկարիա, Յունաստան, Թուրքիա, Հայաստան, Սուրբ մը ալ երկիրներ: Վերադառնալով Լեհաստանի Լվով քաղաքը, 1619-25 տարիներուն գրի առած է իր «Ուղեգրութիւն» հատորը, ուր տեղ տուած է ժողովուրդներու սովորութիւններուն, կենցաղին, բարքերուն, կրօնքին, ծէսերուն, ճարտարապետական յուշարձաններու նկարագրութեան:

Երբ Ֆաթիհ Փաշա մզկիթի մօտակայ Ս. Թէոդորոս Եկեղեցին 1515-1518 թուականներուն մզկիթի կը վերածուի, եկեղեցապատկան գերեզմանատան հողին վրայ կը կառուցուի Ս. Կիրակոս հայկական եկեղեցին, որուն շինութեան տարին ճշգրտութեամբ յայտնի չէ: Եկեղեցու համալիրին մէջ կը



գտնուին Ս. Սարգիս Եկեղեցին ու Ս. Յակոբ մատուռը: Եկեղեցին, 1722-ին, կ'ենթարկուի նորոգութեան եւ 1729-ին ալ կ'ընդարձակուի, Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի Պատրիարքի օրով (1715-1741): Ս. Կիրակոս Եկեղեցին Յունիս 1881-ի մեծ հրդեհին այրելէ յետոյ, 1883-ին կը վերաշինուի 5 մեծ եւ 2 փոքր խորաններով, որոնցմէ գլխաւոր խորանը բացառիկ նրբաճաշակ կառուցուածք ունի: Ան ունի 4 դուռներ եւ 3,000 անձ պարփակելու տարողութիւն: Եկեղեցու տարածքը 1,400 քառակուսի մեթր է, իսկ համալիրինը՝ 3,500, ուր կ'գտնուի հոգեւորականի բնակավայր, դպրոց, աղքատներու կերակուր սպասարկուած ճաշարան, հաւաքման սրահ: Տաճարի 7 խորանները կը խորհրդանշեն եկեղեցու 7 խորհուրդները՝ Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Սուրբ Հաղորդութիւն, Ձեռնադրութիւն, Պսակ Ամուսնութեան եւ Կարգ հիւանդաց, իսկ 4 դուռներն ալ՝ 4 աւետարանիչները՝ Մատթէոս, Մարկոս, Լուկաս եւ Յովհաննէս: 1913-ի Աւագ Շաբաթ օր կայծակահարուածութեամբ քանդուած սուխաձէ գմբէթով զանգակատան տեղ նոյն տարին կը կառուցուի կոթաւան ոճով 29 մեթր բարձրու-

թեամբ նոր զանգակատուն մը, ուր կը գետեղուի քանդուած զանգակատան Զիւճեաններու շինած զանգակը եւ ոսկէխաչ մը: 28 Մայիս 1915-ին, տարագրութեան օրերուն, եկեղեցու զանգակատունը թնդանօթաձգութեամբ կը փլցուի՝ շրջակայ մզկիթներու մինարէներէն բարձր ըլլալու պատճառաբանութեամբ: Առաջին Աշխարհամարտի օրերուն եկեղեցին կը գործածուի որպէս գերմանական սպաներու գորանոց եւ հանրապետութեան սկզբական շրջանին ալ՝ որպէս



Սիւմէրպանքի կտաւի մթերանոց: 1950-ին, պայմաններու մասամբ բարելաւումով, Ս. Կիրակոս կը սկսի ունենալ վարչականներ: Ըստ կարգ մը արձանագրութիւններու Հանչեփէք, ըստ ուրիշներու՝ Սուրիշի, տեղացիներու կողմէ ալ «Կեաւուր մահալլէսի» անհաւատներու թաղ» կոչուած թաղամասին մէջ գտնուող եկեղեցին, 1960-ին, կը վերադարձուի հայ համայնքին՝ աւերուած եւ թալանուած վիճակով: Կարգ մը նորոգութիւններէ յետոյ կը բացուի պաշտամունքի:

Հայութեան արդէն սակաւթիւ ներկայութիւնը տարուէ տարի բոլորովին կը նուազի: Երիտասարդութիւնը ուսանելու, չափահասակներն ալ տնտեսական պատճառներով, նաեւ անհանդուրժելի դարձող շրջապատի ճնշման հետեւանքով իրենց ծննդավայրէն կը հեռանան՝ կորսնցնելով, պետականօրէն ճշգրտած, եկեղեցու վարչութեան անդամ ընտրուելու իրաւունքը: 1990-ին քաղաքը արդէն իսկ հայաթափուած է: Եկեղեցու հոգատարութեան ծանր բեռը կ'իջնայ մի քանի տարեց Տիգրանակերտցիներու ուսերուն վրայ: Եկեղեցին ու եկեղեցապատկան շէնքեր կը մնան անխնամ, գրեթէ փրատակ: 2008-ին, նոր օրէնքներու թուրքութեամբ՝ Տիգրանակերտէն հեռու ապրողներու ալ վարչական ընտրուելու արտօնութեամբ, Պոլսոյ մէջ կը կազմուի Տիգրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցու հիմնարկը: Մարդիկ վաղանցուկ են, կառուցներն են մնալուն՝ որպէս վկայ անցելի մը փառաւոր: Այս հասկացողութեամբ վարչութիւնը Պատրիարքարանի հետ խորհրդակցելէ յետոյ կ'որոշէ 1992-ին տանիքն ալ փուլ եկած եկեղեցին վերանորոգել եւ գայն կորսուած մօտաւորապէս երկու հազար եկեղեցիներուն ցանկին վրայ

չաւելցնել: Կ'առնուին համապատասխան քայլեր: Կը պատրաստուի շինութեան ծրագիրը՝ ամբողջութեամբ պահպանելով կառուցի նախկին տեսքը: Կը ստացուի Յուշարձաններու Խորհուրդի վաւերացումը: Կը ստուգուի ծախսերը: Եկեղեցու շինութիւնը՝ 2 միլիոն 4 հարիւր հազար տոլար (մօտաւոր հաշուով 3,5 միլիոն թրքական լիրա), իսկ զանգակատունը՝ 250 հազար տոլար:

Քաղաքի բնակչութեան Չախլախիչ մեծամասնութիւնը՝ 90 առ հարիւրը, քիւրդ է: Ժողովուրդին

ջի պարիսպներուն վրայի արձանագրութիւնները, քանդակները կը վկայեն, թէ քաղաքը եղած է նուազագոյն 12 քաղաքակրթութիւններու հիւրընկալ, ինչ-որ գբօսարջիկներու համար բաւական հետաքրքրական է: Ջբօսարջիկային եկամուտի աճման համար վերագարձի կոչ կ'ուղղուի նախկին Տիգրանակերտցիներուն՝ անխտիր: Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցու բացումէն յետոյ՝ հոգ չէ թէ որպէս թանգարան, հայկական մշակութային կոթողներու նկատմամբ յառաջացած է մեծ հետաքրքրութիւն: Ս. Կիրակոս Եկեղեցին ալ, իր ինքնուրոյն կառուցուածքով եւ բարձր զանգակատունով եղած էր քաղաքի խորհրդանշիչը: Այսպիսի եկեղեցու մը վերաշինութիւնը եւ պաշտամունքի վերաբացումը քաղաքին համար գբօսարջիկային մեծ արժէք ունի:

Երբ Ս. Կիրակոս Եկեղեցու Հիմնարկի ատենապետ Պրն. Վարդկէս Այլք կը մօտենայ քաղաքապետութեան, թաղապետութեան, իրենց ուղի կը տրուի թէ՛ համագործակցութիւն եւ թէ՛ կը խոստացուի շինութեան ծախսերու մասնակցում՝ 660 հազար տոլարով: Կը խոստացուի նաեւ եկեղեցու վերադարձնել գրաւեալ եկեղեցապատկան հողերն եւ կալուածները, որոնց եկամուտով պիտի հոգացուի եկեղեցու ընթացիկ ծախսերը: Եկեղեցին այսօր ալ ունի հասութեաբեր կալուածներ:

Պրն. Վարդկէս Այլք Տիգրանակերտի պատասխանատուներու հետ գործակցելէ առաջ, անցած է բաւական դժուարին հանգրուաններէ: Ըստ Թուրքիոյ կարգ մը օրէնքներուն փոքրամասնութիւնները իրենց դպրոցները, եկեղեցիները, համայնքային շէնքերը նորոգելու, ներկելու, նոյնիսկ «քամ մը քամել»-ու համար չատուկ արտօնութեան կը կարօտին: Պրն. Վարդկէս Այլք իր յարատեւ ջանքերով, աննկուն կամքով անցած է իւրաքանչիւր հանգրուանէ եւ ստացած է վերաշինութեան արտօնագիր:



Առ այդ թաղապետարանի ծառայութիւնները կը կատարուին մի քանի լեզուներով, ի մէջ այլոց հայերէնով: Կը հրատարակուի եռամսեայ ուսանողական թերթ 6 լեզուներով՝ մին հայերէն: Հրատարակուած է Տիգրայաքըրի մասին հայերէն գրքոցի, նաեւ երախաներու համար հայերէն ու թուրքերէն հէքեաթներու գիրք: Քաղաքը կորսնցուցած է իր անցեալի արդիւնաբերական եկամուտները: Կարիքը ունի տնտեսապէս բարգաւաճման: Քաղաքի շուր-

Այս եկեղեցին, որպէս Պատրիարքարանի պատկանող եկեղեցի, առաջին մէկ օրէն իր վրայ պիտի ունենայ խաչ: Պատարագներ պիտի մատուցուին, ծիսակատարութիւններ պիտի կատարուին՝ որեւէ ատեն: Կը ծրագրուի յառաջիկային ուխտագնացութիւններ կազմակերպել, ինչպէս կը կազմակերպուի դէպի Կեսարիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին: 2011 տարուոյ Հոկտեմբերի

ԻՍԿԱԿԱՆ ՉԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻՆ

Ընդհանրապես անձնական կեանքի բաղադրատարրերը ուրիշներուն կեանքին հետ (մասնաւոր դեպքերու սեռի պատկանողները) արարք մըն է, որ իր վտանգաւոր ազդեցութիւնը ունի քու մտային առողջութեանդ վրայ: Եթէ կը տառապիս այս վիճակէն եւ կը փափաքիս ձերբազատուիլ անկէ, կարդա՛ ներքեւ տրուած տեղեկութիւնները:

Նախ եւ առաջ, եկէք անկեղծ ըլլանք եւ խոստովանինք, թէ բոլորս ալ մենք մեզի կը բաղդատենք ուրիշներուն հետ: Այս վիճակը կեանքի բնութեան մէկն է եւ միշտ սխալ իմաստով պէտք է հասկցուի: Երբեմն այդ բաղդատութիւնը մեզի կը մղէ պայքարելու, զարգանալու եւ յառաջդիմելու: Սակայն կը պատահի այնպէս, որ մենք մեր անձը կը բաղդատենք սահմանուած անձերու հետ, եւ, հետեւաբար, այդ ծողակին մէջ կ'իջնանք եւ մենք մեզի կը գտնենք վերջին շարքերուն մէջ եւ կը սկսինք մեր անձը սահմանափակուած նկատել: Ինչո՞ւ, որովհետեւ կը կարծենք, թէ ուրիշներու կատարած գործերուն բոլորը յաջող եւ հոյակապ են: Հետեւաբար, նախքան զիտարտել մեր ճիշդ ուզածը, կը սկսինք պայքարելու՝ հասնելու դէպի «իտեալ», գործերէս չենք ուզեր կամ պէտք չունինք անոր: Օրինակի համար, կրնանք ընդունիլ քիչ աշխատավարձով բայց բարձր աշխատակուծութիւններով պաշտօն մը: Վստահ որ մասնակից պիտի դառնանք բաղդատութեան մըցումի մը, ուր գոյութիւն ունին կիրառելիք կարգ մը միջոցներ, զորս պէտք է գիտնանք, նախքան մեր անձին վրայ մեր ունեցած տիրապետութիւնը կորսնցնենք:

Արդարեւ, ահաւաստի կարգ մը քայլեր, որոնց պէտք է հետեւիլ՝ երջանկութիւն գտնելու եւ ըլլալու փափաքածիդ պէս եւ ոչ թէ ուրիշներուն նման:

* Աչքերդ սեւեռէ սիրած բաներուդ վրայ:

Երբ նեղութիւն զգաս մտածելով, թէ ուրիշ մը քեզմէ աւելի առաւելութիւններ ունի, դիմէ այնպիսի բաներու, որոնք քեզի կը յիշեցնեն քու ունեցած արժանիքներուդ մասին: Օրինակի համար, մտաբերէ պատկեր մը, որուն մէջ

նուրբ ու գեղեցիկ յատկութիւններդ ի յայտ եկած են, եւ այսպիսով տրամադրութիւնդ պիտի բարեփոխուի:

* Մտածողութեանդ հորիզոնը ընդլայնէ:

Երբ առաւօտեան արթննաս եւ սկսիս մտածել ելք չունեցող հարցերու մասին, կեդրոնացիր առաջնահերթ խնդիրներուն վրայ եւ ապա փորձէ հեռատեսիլ դիտել կամ թերթ մը կարդալ:

Մտածէ այնպիսի բաներու մասին, որոնք քեզի ուրախութիւն պատճառած են ժամանակին կամ ներկայիս կը պատճառեն: Պէտք է խոստովանիլ կեանքիդ լաւ ժամանակներուն մասին, որովհետեւ դրական կողմերու մասին մտածելը կը փոխէ մեր մտածելակերպը, կ'ամրապնդէ մեր աշխուժութիւնը եւ դէպի յառաջդիմութեան կը մղէ մեզի:

* Ձիրքերդ արձանագրէ՛. Յիշէ քու ունեցած ձիրքերդ եւ կարողութիւններդ, յիշէ գործիդ մէջ արձանագրած յաջողութիւններդ, յիշէ բարեկամներդ ու բարեկամուհիներդ եւ յիշէ թէ ինչպէս կրցար անոնց հետ ունեցած յարաբերութիւններդ ամրապնդել: Այս բոլորը քեզի պիտի փաստեն, թէ դուն կը վայելես կարողութիւններ, զորս անգտանելի կրնան ըլլալ ուրիշներուն մօտ:

* Անկախութիւնդ վայելէ. Կեանքդ անդունդի եզրին չի գտնուիր, դուն կրնայ ըլլալ ուրիշներէն շատ աւելի լաւ եւ, սակայն տակաւին նախանձոտ աչքերով կը նայիս այն անձին, որուն հետ կը բաղդատես ինքզինքդ: Վստահ պիտի զարմանաս երբ տեղեկ ըլլաս, թէ անալ հաւանաբար ունի իր հարցերն ու դժուարութիւնները, եւ քու երեւակայածիդ պէս մեղրածոր կեանք մը չ'ապրիր:

* Փնտռէ նոյն հարցերէն տառապող բարեկամ/բարեկամուհի մը.

Երբ խնդիրներու մէջ խեղդուիս եւ ցաւ զգաս քեզ նեղութիւն պատճառող հարցերէն, դուն պէտք չունիս տեսնելու բարեկամ/բարեկամուհի մը, որ իտեալ կեանք մը կ'ապրի, այլ դուն պէտքը կը զգաս տեսնելու այլ անձ մը, որ կը տառապի նոյն քու ունեցած հարցերէդ, քեզի հետ կը գտնուի միեւնոյն նաւուն վրայ:

ՏԱՐԻՔԻ ՅԱՌԱՋԱՅՈՒՄ

Քնաւ նկատա՞ծ էք, թէ միակ ժամանակը մեր կեանքին մէջ երբ կ'ուզենք մեծնալ, այն ալ մեր պզտիկ եղած ժամանակին է:

Երբ 10 տարեկանէն պզտիկ ենք, այնքան շատ խանդավառուած կ'ըլլանք մեծնալով, որ նոյնիսկ մեր տարիքին կտրուկ թիւերը կը հաշուենք: «Քանի՞ տարեկան եմ»:

Մենք երբեք չենք ըսեր, որ երեսուն վեց ու կէս տարեկան ենք:

Մենք չորս ու կէս տարեկան կ'ըլլանք, հինգ տարեկանի մօտե նայով:

Պատանեկութեան շրջանին, չափորդ թիւին կը ցատկենք կամ նոյնիսկ քանի մը թիւ աւելի առաջ:

«Քանի՞ տարեկան եմ»:
«16 տարեկան պիտի ըլլամ»:
Կրնայ ըլլալ 13 եւ, բայց այդ 16 պիտի ըլլաս:

Կեանքին ամէնէն մեծ օրը կ'ըլլայ, երբ 21 տարեկան ըլլաս: Բայց չեստոյ 30 կ'ըլլաս եւ յանկարծ, ի՞նչ պատահեցաւ: Կ'ունենաս այն զգացումը, որ այլեւս հաճելի բաները վերջ գտած են: Ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ սխալ կայ: 21 եղար, 30 դարձար եւ ահաւաստի 40-ի դուռերը կը զարնես:

Արգելակները կ'ոխեցէ՛ք ամէն ինչ կարծես կը սահի: Զգիտցած վիճակիդ մէջ, յանկարծ 50-ի կը հասնիս եւ կը զգաս, թէ երազներդ չքացած են: Եւ հասար 60-ի նոյնիսկ թերեւս չէիր հաւատար, որ հոն պիտի հասնիս:
Արդարեւ, 21 եղար, 30-ը ան-

ցար, 40-ի դուռերը զարկիր, 50 հասար եւ 60 կրցար հասնիլ:

Կարելի է նաեւ որ հասնիս 70-ի, ապա 80-ի եւ անկէ ետք Աստուած գիտէ:

Ինչպէ՞ս կարելի է երիտասարդ մնալ:

1) Անկարեւոր թիւերը մէկ կողմ նետեցէք: Այս կ'ընդգրկէ տարիք, կշիռք եւ բարձրութիւն:

2) Միայն հաճելի բարեկամներդ շուրջդ պահէ:

3) Միշտ աւելին սորվիր:

4) Պզտիկ բաներ վայելելու հաճոյքը առ:

5) Յաճախ խնդա, երկար եւ բարձրաձայն:

6) Արցունքները պատահական են: Հետեւաբար լաց, դիմացիր եւ սակայն շուտով դէպի յառաջ անցիր:

7) Միակ անձը, որ մեր ամբողջ կեանքին ընթացքին մեզի հետ կը մնայ, այդ ալ նոյնիսկ մեր անձն է: Արդարեւ, ողջութեանդ ընթացքին ողջ եղիր:

8) Ինքզինքդ շրջապատէ սիրած անձերով, առարկաներով կամ նախասիրութիւններով:

9) Առողջութեանդ հոգ տար եւ ուշադրութիւն ըրէ: Եթէ լաւ է պահէ՛ գոյն: Եթէ անկայուն է բարելաւէ գոյն: Իսկ եթէ օգնու թեան պէտք ունիս մի տատամսիր:

10) Միտած անձերուդ ամէն առիթով ըսէ, թէ որքան կը սիրես գիրենք:

11) Միշտ յիշէ, որ կեանքը չի չափուիր քու առած շունչերուդ քանակով, այլ այն պահերով, որոնք առած շունչիդ իմաստ կու տան:

ՄԱՐՄՆԻ ԿԱՅՈՒՆ ԾԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՅՆՈՒ ՅԱՄԱՐ

Կարելոր է, որ անձ մը երեք ժամ ուսէ՛ ունենալու համար առողջ եւ վայելուչ կազմուածք մը: Սակայն հիմնական պայմաններ գոյութիւն ունին, որպէսզի մեր մարմինը աւելորդ ծանրութիւն չստանայ:

* Նախաճաշ.

Նախաճաշը հիմնական կերակուրն է, որ մարմնին կայունութիւն կու տայ ամբողջ օրուան ընթացքին եւ կ'օգնէ անոր՝ անհրաժեշտ ուժանիւթը ստանալու: Հետեւաբար, կը սխալի այն անձը, որ կը խորհի, թէ նախաճաշ չկատարելը կ'օգնէ նիհար մնալու, որովհետեւ մարմինը աշխատանքի ընթացքին կը վատնէ առտուան այդ առած քալորները:

Նախաճաշին կարեւորութիւնը կը կայանայ այն իրողութեան մէջ, թէ այդ պէտք է ընդգրկէ անդարար հացահատիկներ: Նախաճաշին պէտք է աւելցնել ձերմակ պանիրն ու կաթը, ինչպէս նաեւ քիչ քանակութեամբ մեղր: Պէտք է մոռնալ նաեւ թարմացուցիչ պտուղներ ուտելը:

* Ծաշ.

Ծաշը ունի նախաճաշին համահասար կարեւորութիւն, որովհետեւ մարմնին կը հայթայթէ աշխատանքի ընթացքին կորսնցուցած ուժանիւթը եւ անոր կու տայ նորանոր ուժանիւթեր, որոնց միջոցով կարելի կ'ըլլայ յարատեւել օրուան մնացեալ ժամերուն ընթացքին:

Նախընտրելի է ճաշը սկսիլ բանջարեղէններ ուտելով (աղցան), ինչպէս նաեւ բրինձ ու գետնախնձոր: Ծաշը պէտք է ընդգրկէ նաեւ կտոր մը ձուկ կամ շոգիով եփած կտոր մը միս:

Պէտք է մոռնալ ճաշին աւարտին պտուղ ուտելու:

* Ընթրիք.

Ընթրիքը հարկ է ընդգրկել եփած բանջարեղէն եւ կաթնեղէն:

Ընթրիքի ընթացքին պէտք է ուտել լման կշտանալու աստիճան, այլ հարկ է սեղանէն հեռանալ կշտանալէն քիչ մը առաջ, որպէսզի մարտողութեան գործողութեան առիթ տրուի հանգիստ ձեւով ընթանալու:

ԿԵԱՆՔԻ ՄԷՋ ԼԱՒԱԳՈՅՆ ՊԱՅԵՐ

- * Սիրահարուիլ:
- * Խնդալ մինչեւ ստամոքսդ ցաւելու սկսի:
- * Քաղաքի տարբեր շրջաններուն մէջ պտոյտ կատարել:
- * Ռատիոկայանէն նախասիրած երգը ունկնդրել:
- * Քննալու մտնել՝ դուրսը տեղացող անձրեւի ձայնին ահանջ տալով:
- * Լոգանքէն դուրս ելլել եւ տաքուկ անձրեղնով փաթթուիլ:
- * Ամալվերջի քննութիւններուն փայլուն նիշեր ստանալ:
- * Հետաքրքրական խօսակցութեան մաս կազմել:
- * Հին տափատի մը մէջէն մոռցուած դրամ գտնել:
- * Կատարած մէկ արարքիդ համար դուն քու վրադ խնդալ:
- * Բարեկամներու հետ հոյակապ ընթրիքի մը մասնակցիլ:
- * Առանց պատճառի խնդալ:
- * Պատահմամբ լսել մէկը, որ քու մասին լաւ ձեւով կ'արտայայտուի:
- * Մայրամուտը դիտել:
- * Ունկնդրել երգ մը, որ քեզի կը յիշեցնէ կեանքիդ մէջ կարեւոր անձ մը:
- * Ստանալ կամ տալ առաջին համբոյցը:
- * «Յատուկ» անձի մը տեսած պահուն մարմնիդ մէջէն քալող էլեկտրացնող զգացումը զգալ:
- * Սիրած անձը ուրախ տեսնել:
- * Սիրած անձիդ պլուզը հագնիլ եւ անոր վրայէն իր անուշահոտը շնչել:
- * Լսել մէկը, որ «կը սիրեմ քեզի» կ'ըսէ:

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենյակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ ԴԵՏ՝ ԴԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 8-էն

գործիչ, նախկին յունահայ կարպիս Սուրէնեան, որ դժբախտաբար շատ կարճ խօսեցաւ, իրեն սահմանուած ժամանակը չչարաշահելու մտովախոտեմբ: 1939-45 թ. համաշխարհային պատերազմի ամբողջ շրջանը Կիպրոս անցուցած գրողը ըսաւ «Ի՞նչը մեզ կը պահէր եւ կը մղէր գոհողութիւններու - հայկական ոգին պահպանող աւանդութիւնները, հայկական շունչը, մթնոլորտը» եւ եզրակացուց «Մելգոնեանը ըստ էութեան չէ փակուած եւ չի կրնար փակուիլ, որովհետեւ պատմութիւն ունի եւ հայ մշակութիւն անբաժանելի մասն է:»

Ապա բեմ բարձրացաւ Բիւզանդը: Նախ քան իր սրտի խօսքը ուղղելը, ան մէկ վայրկեան յտնակալ լուռութիւն խնդրեց ներկաներէն ի յարգանս մեզմէ չաւէտ բաժնուած մեր ուցուցիչներուն ու ընկերներուն: Իր խօսքին մէջ ան ըսաւ «Մելգոնեանը հայ երիտասարդին առջեւ բացուող դուռ մըն էր՝ հայ ոգիով կրթութիւն, հայ մնալու, հայ ապրելու: Ապա բեմ հրաւիրեց պարոն Սեպուհ Աբգարեանը, որ իր յուզախառն խօսքին մէջ անդրադարձաւ այն «կտոր մը հայրենիքին, որուն դուռերը փակուեցան անհաղորդ եւ անկայուն մարդոց որոշումով»: Այս առթիւ ան մեզի որպէս մասունք վերադարձուց մեր երբեմնի ուսուցիչ Պերճ Սանտրունի/father-ին յուշ-տետրակը, որուն մէջ իր հանգստեան կոչուելու առիթով մեր դասընկերներէն շատեր արտայայտած էին իրենց երախտագիտութիւնը: Իսկ Հրաչին վերադարձուց իր գծագրութիւններէն մին, խորապէս յուզելով զինք: Մենք ալ խորհրդանշական նուէր մը ունէինք պարոն Աբգարեանին համար - զարդագիր

այբուբենի կտաւ մը, պատրաստուած Լոս Անճէլէսաբնակ արուեստագէտ Սիրուն Երէցեանի կողմէ: Վարձքը կատար մեր բոլոր ուսուցիչներուն:

Առանց երգչախումբի ելուցիւն հանդէս չէր ըլլար Մելգոնեանի մէջ: Որքան տեղին էր, ուրեմն, հոյակապ գեղարուեստական բաժինը՝ կատարմամբ Հայաստանի Պետական Կամերային Երգչախումբին, դեկավարութեամբ Ռոբերտ Մլքեյանի: Անոնք մեզի հրամցուցին Սեպուհ Աբգարեանի «Մելգոնեան Վարժարան»ը եւ «Հրեշտակ Զուարթուն»ը, Վահան Պէտէլեանի «Տաղ Սուրբ Մեսրոպայ»ն, Բարսեղ Կանաչեանի «Հոյ Նար»ը եւ «Շուշու»ն, Կոմիտասի «Հարսանեկան Շարք»ը, «Զիգ ՏուՔաշի»ն, «Հայր Մեր»ը: Հուսկ ողջունի խօսքով ելուցիւ ընկեցաւ ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան փոխնախարարը: Յաջորդեց հիւրասիրութիւն:

Միժեռնակաբերդ մեր այցելութեան օրը արտօնութիւն խնդրած էինք ծառ տնկելու եւ յատուկ կարգադրութեամբ շնորհուած էր մեզի այդ արտօնութիւնը: Այսպէս, Շաբաթ, Մայիս 21-ի առաւօտեան վերադարձանք Հայոց Յեղասպանութեան 1,500,000 զոհերու յուշակոթող, ուր թանգարանի փոխտնօրէն Թումաս Թումասեանի, պարոն Համպոյեանի եւ պարոն Ճիգմէճեանի առաջնորդութեամբ եւ մէյ-մէյ բուռ հողով մեր բերաւոր նահատակներու չիշատակին տնկեցինք հացենի մը, այդպէս կոչուած որովհետեւ սպանդէն ճողոպրած մայրիկները անոր հունտերը աղացած ու հաց թխած էին ողջ մնալու համար: Պարոն Համպոյեան առաջարկած էր փորձել զտնել Լեւոն Զաւէն Սիւրմէլեանի Ասացուած ք ծառ տնկելու առթիւնը,

կարդալու համար ծառատունկի պահուն: Գտնողը ինք եղաւ, իսկ կարդալու պատիւը տրուեցաւ ինծի: Տէր, օրհնէ՛՛ ծառն այս մատղաշ:

.....

Մեռելներու իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի:

Կիրակի, Մայիս 23-ի առաւօտեան Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ յաւարտ Ս. Պատարագի մեր խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան անմահ բարեբարներու, ինչպէս նաեւ վերջերս մահացած ընկերներու յիշատակին: Նոյն երեկոյեան սկսանք խումբ առ խումբ հրաժեշտ առնել իրարմէ, խոստանալով կրկին հանդիպիլ, բայց այս անգամ չսպասել 43 տարի:

Ուսուսիչներուս նուիրելու նպատակով հետո տարած էի անցեալ տարի Աթէնքի մէջ լոյս տեսած «Հայ-Յունական Ռազմական Առնչութիւնների եւ Համագործակցութեան Պատմութիւն» երկրագրու հրատարակութեան օրինակներ, որուն հեղինակն է Յունաստանի մօտ ՀՀ ռազմական կցորդ գնդապետ Սամվէլ Ռամազեան, իսկ յունարէնի թարգմանիչը՝ նուաստս:

Փոխարէնը ես ալ ստացայ մի քանի գիրք: Անոնցմէ մէկուն - «Հոգեւոր Մտորումներ», պարոն Միհրան Ճիգմէճեանի քարոզներու եւ դասախօսութիւններու ծաղկաքաղ մը, իմ բարութեամբ պարոն Սարգիս Համպոյեանի - «Որպէս Մուտք»ին մէջ ի միջի այլոց կը գրէ պարոն Ճիգմէճեան «Խորապէս կը գնահատեմ եւ ի սրտէ շնորհակալ եմ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1968-ի շրջանաւարտ իմ քանի մը աշակերտներու՝ Արա Գուլեանին, Միսաք եւ Մարօ

Ներսէսեաններուն, Յակոբ Պէրպէրեանին, Խաչիկ Թոզճեանին, եւ Աւետիս եւ Րիթա Օզգայեաններուն՝ որոնք իրենց երբեմնի ուսուցչին հոգեկան մեծ բաւարարութիւն պարգեւեցին, երբ սիրալոյս իրենց նիւթական օժանդակութիւնը բերին այս ծաղկեփունջին հրատարակութեան համար: Երախտագէտ աշակերտին ներգրուածը իր ուսուցիչներու աշխատանքին լոյս ընծայման: Ապրիլ՝ տղաք:

Վստահ եմ թէ բոլորիս զգացումները արտայայտած կ'ըլլամ, եթէ ի խորոց սրտի շնորհակալութիւն յայտնեմ նախ եւ առաջ Արային, որ տարի մը ամբողջ ոչ միայն թափեց ամէն ջանք բացառիկ շաբաթ մը մէջտեղ բերելու նպատակով, այլ նաեւ մինչեւ վերջ մշտեց տատամտողները, կարելի եղածին չափ մասնակիցներու թիւը աւելցնելու համար. Վահէին եւ Գէորգին, որոնք որոշ կարեւոր հարցերու լուծման համար օգնեցին Արային. Միսաքին եւ «մեծ» Վահէին, որոնք այնքան վարպետօրէն ստանձնեցին ամբողջ շաբաթուան «սեղանապետութիւն»ը: Շնորհակալութիւններ մեզի միացող մեր սիրելի ուսուցիչներուն - վստահ եմ թէ բոլորիս ալ վարքը գովելի կ'ըլլայ այլեւս: Յատուկ շնորհակալութիւններ արուեստագէտ-լուսանկարիչ Պողոս Պողոսեանին, որ Բիւզանդին ու Մարիին ծանօթութեան շնորհիւ այնքան օգտակար եղաւ լուսանկարներու հարցով: Շնորհակալութիւն բոլորիս որ որոշեցինք մասնակցիլ: Չեմ գիտեր թէ երբ կամ ինչ առիթով պիտի կրկին այցելեմ Հայաստան:

Գիտեմ, սակայն, թէ պիտի ունենայ իրեն յատուկ համն ու հոտը, նոյն հասարակ յայտարարով հայրենիքով:

AMERICAN RELIABLE WINDOWS



www.americanreliablewindows.com

Beautify while increasing the value of your home with elegant,

18 months no interest* Financing O.A.C

ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.

Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

Our Windows Qualify For Tax Credits

Manufacturers rebates & deep discounts available NOW.
Product, Pricing and Financing to meet any Budget.

888-804-7250
Your Satisfaction is Guaranteed.

Licensed • Certified • Insured CSLB LIC#901591

\$89 Rebate* toward the price of new Vinyl Windows

Rebate Example:
5 windows = \$445
10 windows = \$890
15 windows = \$1335

ԷՂԵԼՎԵՅՍ, ԱՌԻԺԱՃԱՆԿ, ԱՌԻԺԱԹԱԹԻԿ LEONTTOPODIUM ALLPIINUM

ՋՈՒԼԻԵՏԱ ՍԱՀԱԿԵԱՆ

Այս բոյսի հետ բազմաթիվ առասպելներ են կապված: Մի արքայադուստր պայծառ է դնում, որ կ'ամուսնանայ այն խիզախ ասպետի հետ, ով իրեն կը նուիրի աստղակերպ, հղելվեյս ծաղիկը: Ծատ խիզախների կեանքեր կործանուեցին դէպի ծաղիկը տանող ճանապարհին: Երբ վերջապէս մի ասպետի յաջողուեց բերել այդ ծաղիկը՝ նա տեսաւ, որ արքայադուստրն իր տատիկի տարիքին է: Նշենք, որ հղելվեյսը համարուած է իշտար (վեներա) աստուածուհու կողմից հովանաւորուող սրբազան ծաղիկ, իսկ աստուածուհու սիրելի կենդանին առիւծն էր: Այս առասպելական բույսը ամբողջ աշխարհում պահպանուած է օրէնքով: Էղելվեյսը բարձր լեռներում աճող բազմամեայ բոյս է: Յօդուների բարձրութիւնը 10-15 մ է: Նրբագեղ ցօղունի գագաթը գարգարում է հղելվեյսը: Ծաղիկաթի տերեւները հորիզոնական են՝ խիտ թաւապատ, դրանց վրայ են գտնուում մանր փոքրիկ ծաղիկների փնջիկներ: Որպէս կանոն՝ ծաղիկներն աճում են կառոտ թերթաքարով պատուած հողի վրայ: Բոյսը ծաղկում է Յունիս-Յուլիս ամիսներին: Այն անուանում են նաեւ մետաքսանման ծաղիկ: Բոյսը հանդիպում է Ալթալիում, Կարպատներում, Կովկասում: Ունի աւելի քան 10 տարատեսակներ: Հնագոյն ժամանակներից բոյսն օգտագործուած է ժողովրդական բժշկութիւնում: Ունի հակադողերոցքային, հանգստացնող, խորխուրեղ յատկութիւններ: Դիբեթեան բժշկութեան մէջ բոյսը կիրառուած է որպէս մարդու կեանքը երկարացնող միջոց, քանի որ այն ունի օրգանիզմի հիւսուածքները վերականգնելու, թարմացնելու յատկութիւն: Բոյսի պատրաստուածները նպաստում են մաշկի երիտասարդացմանը: Բոյսը կիրառուած են ստամոքսի խանգարումների, ճողուածքի, լեղաքարային հիւանդութեան, երակների վարիկոզ լայնացման, տրոֆիկ խոցերի բուժման համար: Բոյսը պարունակում է մեծ քանակութեամբ տանին, նաեւ հակաօքսիդանտային յատկութիւններ ունեցող քլորոգենային եւ ֆենոլային թթուներ: Այդ պատճառով շատ երկրներում բոյսն օգտագործուած է մաշկի խնամքի համար նախատեսուած միջոցների արտադրութեան մէջ:



բոյսերի այս տեսակի անուանումը կապուած է երկնքից ընկնող աստղերի հետ: Հին սումերների մշակութիւնում, բացի երկնքի, երկրի եւ ստորգետնեայ ջրերի աստուածներին՝ եղել են նաեւ եօթ աստուածութիւններ, որոնք կապուել են երկնային լուսատուների հետ: Ուշագրաւ է, որ աստղածաղիկը հինդուիզմում խորհրդանշում է աստուածային գերհզօր գէնք: Յունարէն aster բառը համահունչ է հայերէն «աստղ» բառին: Հնում մարդիկ հաւատացել են, որ աստղածաղիկները հաղորդակցուած են իրենց «քոյր» հանդիսացող երկնային աստղերի հետ: Եթէ այդ ծաղիկների մէջ կանգնած գուշակութիւն անէք՝ նայելով ընկնող աստղերին, ապա այն կը կատարուի: Ծաղիկն, իրօք, նման է աստղի, կենտրոնում դեղին խողովակաձեւ ծաղիկներն են, որոնցից տարածուած են ճառագայթաձեւ կապտամանուշակագոյն ծաղկաթերթիկները:

Հարիւրամեակներ առաջ Ֆրանսայի կուսակրօն Նիկարուիլը Չինաստանից բերել է աստղածաղիկի Կալիստեֆուս տեսակը, որից մշակուել են աւելի քան 4000 դեկորատիւ տիւններ:

տիւններ: Եւրոպայում, բնութեան մէջ հանդիպում են amellus-երիցուկի, albosetus սպիտակ ասեղնաձեւ, Կենտրոնական Ամերիկայում՝ Baseharis trinervis տեսակը, վերջինիս ցօղունը նման է թռչնի թևի, իսկ ծաղիկները սպիտակ են:

Աստղածաղիկ ալպիականի սերմերը երկարաւուն են, խառտ, երկար թելիկով: Ծաղկում է Յունիս-Յուլիս ամիսներին, աճում է քարքարոտ լանջերին, սոճուտների մօտակայքում, երբեմն ալպիական գոտում: Աստղածաղիկները հեշտ են յարմարուած հայաստանեան կլիմայական պայմաններում: Բուժական նպատակներով ծառայում է բոյսը ամբողջութեամբ, մթերում են ծաղկման շրջանում: Բոյսը պարունակում է ալկալոիդներ, կը վերցետին, ուտտին, սպոնջիններ: Արմատներում յայտնաբերուել են գլուկոզիդներ: Բոյսը ունի խորխուրեղ, ջերմութիւնը իջեցնող վարակամերժ յատկութիւն:

Թոքախտի, էկզեմայի, մրսածութեան, յօղացաւերի, ստամոքսաբորբի դէպքում կիրառուած են հետեւեալ թուրմը. 2 ճ/գ փոշիացրած խոտաբոյսին աւելացրէք 400 մլ եռջուր, թրմէք 30 րոպէ: Եփէք 15 րոպէ եռացող ջրային բաղնիքի վրայ: Քամէք: Բաժանէք 4 մասի, խմէք օրուայ ընթացքում, սնունդ ընդունելուց 1 ժամ յետոյ:

Դեղատոմսեր
Բոյսի մանրացրած 1 դեներտային դգալ խոտը 1 ժամ թրմէք 200 մլ գտուած սառը ջրի մէջ, եփէք մարմանդ կրակի վրայ (ջրային բաղնիք), եռացրէք 5 րոպէ: Հովանալուց յետոյ քամէք: Բաժանէք 3 մասի, խմէք սնունդ ընդունելուց 20-30 րոպէ առաջ:
Lnujnũ
Մանր կտրատած 4 ճ/գ հղելվեյսի բոյսի վրայ լցրէք 500 մլ օդի, թրմէք երկու շաբաթ: Քամէք: Մաքրէք մաշկն առաւօտեան եւ երեկոյեան:
Աստղածաղիկ ալպիական
Aster alpinus
Ըստ հին աւանդազրոյցների՝

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԵՕԹԽՈՐԱՆ ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Շարունակուած էջ 15-էն

22-ին պիտի կատարուի եկեղեցու օծումը եւ 23 Հոկտեմբեր, Կիրակի օր ալ պիտի մատուցուի Ս. Պատարագ: Նկատի ունենալով, թէ այսօր Տիգրանակերտի մէջ միայն 5 հայ ընտանիք գոյութիւն ունի, կարելի է հարց տալ, թէ կարժէ՞ մի քանի միլիոն տողար ծախսել վերաշինութեան մը համար: Անտարակոյս, կ'արժէ՛: Երբ Անիի մէջ, Անին կերտող հայերու, քաղաքի հայկական թագաւորութեան մասին որեւէ գրաւոր կամ բերանացի յիշատակում չըլլար, երբ փոխանակ Անիի՝ Անը

թեան հետեւանք, այն ինչ-որ տասր տարի առաջ նոյնիսկ խորհիլ կարելի էր, այսօր որոշ չափով կարելի է իրականացնել: Մեզմէ յափշտակուած՝ անօրէն կերպով մեր ձեռքէն խլուած ազգային հարստութեան վերատիրանալու աշխատանքին միակ տեղը Թուրքիոյ սահմաններուն մէջ է: Պոլսոյ մէջ ալ, շնորհիլ կարգ մը եկեղեցիներու Թաղական Խորհուրդներուն տարած աշխատանքին, գրաւուած եկեղեցապատկան հողեր, կալուածներ վերադարձուած են այդ եկեղեցիներուն: Այս հսկայ աշխատանքը 50-60 հազար նկատուող Թուրքիոյ



(ANI - յիշատակ), Աղթամարի՝ Ագտամարի (ճերմակ հանքերակ) կ'ըսուի, Տիգրանակերտի 3,000 հօգինոց եկեղեցին կենդանի վկան պիտի ըլլայ ոչ միայն քաղաքի, այլեւ Թուրքիոյ տարածքի «անյայտացած» հայութեան անցեալի գոյութեան: Յուշարձան մը պիտի ըլլայ Մեծ Եղեռնի գոհերուն: Հաւաքավայր մը պիտի դառնայ բոլոր այն գաղտնի՝ ծածուկ հայերուն, որոնք, պայմաններու բերմամբ, մասմետականացած են՝ նոյնիսկ մօտ անցեալին: Եկեղեցու օծման օրը, պաշտօնապէս հայացած՝ իրենց արմատներուն պաշտօնապէս վերադարձած 7 անձեր պիտի մկրտուին: Սա ուրիշներու համար կ'ըլլայ խրախուսական, կը դառնայ վարակիչ, մղիչ ոյժ՝ վերադառնալու իրենց արմատներուն: Անտարակոյս, կ'արժէ՛: Ս. Կիրակոս, անցեալին մեծ թիւով հայերուն ապրած քաղաքի մը մէջ վերաշինուող առաջին Հայաստանեայց եկեղեցին է: Անտարակոյս, կ'արժէ՛: Ս. Կիրակոս, իրմէ յափշտակուած մօտ 200 կալուածները ետ պահանջող եւ անոնց մէկ մասին արդէն իսկ տիրացած Փոքր Ասիոյ՝ մեր պապերուն բնակած հողերուն վրայ գործող առաջին եկեղեցին է: Անգամ մը եւս պէտք է շեշտուի, թէ Տիգրանակերտի մէջ այս բոլոր կ'իրականանան, մեր յափշտակուած ազգային հարստութեան տէր կանգնելու համար Թուրքիոյ սահմաններուն մէջ համբերութեամբ եւ յարատեւութեամբ գործող, Պրն. Վարդկէս Ալքքի եւ իր վարչական ընկերներուն: Հոս պէտք է նշել, թէ Թուրքիոյ ներկայ իշխող կուսակցութեան որդեգրած «դէպի ժողովրդավարութիւն» քաղաքականու-

հայ համայնքին համար չափազանց ծանր է: Համայնք մը որ գոյատեւելու համար արդէն ծանրաբեռնուած է իր Պատրիարքարանի, 45 եկեղեցիներու, 16 դպրոցներու, ազգային հիւանդանոցի, գերեզմանատուներու ընթացիկ ծախսերով...: Սփիւռքը որ մեր պապենական հողերէն աքսորուածներու, ջարդէն մազապուրծ ազատածներու, կամ իր ծննդավայրէն այս կամ այն պատճառով հեռացածներու սերունդն է, այս 50-60 հազարնոց գաղութի աշխատանքին թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս պէտք է նեցուկ կանգնի: Ամէն տեղ, որեւէ գործի սկսելէ առաջ, այդ գործի յաջողութեան նկատմամբ միշտ թերահաւատներ գտնուած են, պիտի գտնուին ալ: Թերահաւատներու բացասական ազդեցութիւնը կանխելու նպատակաւ Տիգրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցույ հիմնարկը շինութեան սկզբնաւորութեան նուիրահաւաքումի չէ ձեռնարկած: Հիմա, երբ շինութեան 60 առ հարիւրը իրականացած է եւ նոյնիսկ օծման օրը ճշդուած, կոչ կ'ողողուի համայն հայութեան՝ նուիրահաւաքել 1 միլիոն տողար: Ընդառաջելով այս կոչին 14 Մայիսին Նիւ Ճրսիի եւ 21 Մայիսին ալ Թորոնթոյի մէջ նուիրահաւաքումի ճաշկերոյթներ սարքուեցան, Պոլսոյ Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ Գեր. Տ. Արամ Արք. Աթէշեանի ներկայութեամբ եւ տեղույն եկեղեցիներուն հովանաւորութեամբ: Ս. Կիրակոս Եկեղեցույ ինքնատիպ ու փառաւոր ներկայութիւնը պիտի փայտայ մեր բոլորին ազգային ինքնող կուսակցութիւնը, հոգ չէ թէ մենք ապրինք մեր հայրենի հողերէն հեռու:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Everyday Low Prices!



Southern California's Premier Wine & Spirits Superstore

3 LOCATIONS TO SERVE YOU

GLENDALE

825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202
(818) 242-0683 • Mon-Sat. 9AM-8PM • Sunday 10AM - 4PM

PASADENA

1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104
(626) 794-7026 • Mon-Sat. 9AM - 8PM

SHERMAN OAKS

13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401
(818) 785-6529 • Mon-Sat. 9AM - 8PM

 <p>GREY GOOSE VODKA ALL FLAVORS</p> <p>\$21⁹⁹</p>	 <p>ARARAT 3 YR ARMENIAN BRANDY</p> <p>\$12⁹⁹</p>	 <p>BELUGA NOBLE RUSSIAN VODKA</p> <p>\$22⁹⁹</p>	 <p>Dewar's "White Label" 1.75L</p> <p>\$24⁹⁹</p>
 <p>roberto cavalli VODKA 1.75L</p> <p>\$49⁹⁹</p>	 <p>CÎROC VODKA ALL FLAVORS</p> <p>\$17⁹⁹</p>	 <p>BACARDI LIGHT OR GOLD</p> <p>\$8⁹⁹</p>	 <p>PUTINKA LIMITED EDITION</p> <p>\$22⁹⁹</p>
 <p>JOHNNIE WALKER BLUE LABEL</p> <p>\$119⁹⁹</p>	 <p>CHIVAS REGAL 12 BLENDED SCOTCH WHISKY</p> <p>\$15⁹⁹</p>	 <p>SKYY VODKA ALL FLAVORS</p> <p>\$8⁹⁹</p>	 <p>STOLICHNAYA RUSSIAN VODKA 1.75L</p> <p>\$18⁹⁹</p>
 <p>TEQUILA CAZADORES BLANCO OR REPOSADO</p> <p>\$19⁹⁹</p>	 <p>Ketel One VODKA</p> <p>\$16⁹⁹</p>	 <p>Hennessy COGNAC VS</p> <p>\$19⁹⁹</p>	 <p>TEQUILA Don Julio 1942</p> <p>\$79⁹⁹</p>
 <p>Tsar Alexander I VSOP COGNAC</p> <p>\$19⁹⁹</p>	 <p>TEQUILA PATRÓN SILVER</p> <p>\$31⁹⁹</p>	 <p><i>El Masaya</i> ARAK</p> <p>\$20⁹⁹</p>	 <p>NOY 7 YR ARMENIAN BRANDY</p> <p>\$19⁹⁹</p>

*This ad expires on 06/18/11 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.